891.99-82
F-26

1931

# ԱՅԼԱԵՎԻԿՅԱՆ

891.99-82
Բ-26

# ԷԼԵԿՏՐԱՅԱՆ

ԼԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԴՈՎԱԾՈՒ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

71.655

01 JAN 2009

-6 NOV 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ

891.99-82
Բ-26
Սպ.

# ԲԱՑԼՇԵՎԻԿՅԱՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ

1464

(ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

121

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1931

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—СССР
им. Е. Маскикяна
ՄԱՍՔԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

13810-57

-4 MAR 2013

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏ. 1552
ՊԱՏՎԵՐ 1360
ԳՐԱՌԵՊՎԱՐ 6273 (բ)
ՏԻՐԱԺ 4000

# ԿԱԾԱՆԸ

## 1.

Ճանապարհն արտերի արանքը կտրելով գյուղ էր մտնում փոշոտ մեջքով: Ամառ ժամանակ արևը չորացնում էր ճանապարհը և անցորդի յետևից փոշի յեր բարձրանում: Իսկ յեթե գարուն կամ աշուն լիներ, ցեխն անձրևաջրով հագեցած պլպլում էր ճանապարհում: Այդ ժամանակ անցորդը վոտքերի թաթերը լրիվ խրում էր ցեխի մեջ: Նա տնքտնքալով յերկար քաշում էր վոտքերը և հազիվ հանում, որ ներներից մեկն ու մեկը թողնելով այնտեղ:

Փոշոտ ճանապարհն արտերի շարքերով շրջապատված գյուղ էր մտնում: Բայց հենց գյուղի մոտ, խրճիթների ու մարագների ստվերի տակ ընդհատվում եյին արտերը և ճանապարհը նրանցից դենը մենակ ինքն էր շարունակում իր փոշոտ ժապավենը:

Զքավոր Թաթոսի արտերից մեկն այդ ճանապարհի վերևի կողմով, հենց նրան կից գալիս և կտրվում էր իր, Թաթոսի մարագի պատի տակ:

Տարվա ցեխոտ յեղանակներին անցորդներին ստիպում եյին թողնել ճանապարհը և արտի կամ վարած հողի միջով գնալ իրենց գործին: Հասկանալի յե, վոր նոր կածան-շավիղը միայն կարող էր ճանապարհի վերևի կողմով լինել, վորովհետև թափված անձրևաջուրը հոսում էր ցած, դեպի ճանապարհի ներքևի կողմը:

Այդ եր պատճառը, վոր անասունները, սայլերը և մարդիկ հաշվի չեյին առնում վարած հողը և նրանց վոտքերի տակ պնդվում, կորչում եյին ակոսները։ Հենց յերկու շաբաթից հետո նոր կածանները յերևում եյին արտի մի ծայրից մինչև մյուսը։ Ցեվ ամենից շատ վոտքի տակ եր ընկնում Թաթոսի հողը, տրորվում եր ցելը և կամ փչանում արտը։ Ցորենի դեղնած ծիլերը դեռ մատնաչափ չբարձրացած անխղճաբար ջարդվում եյին մարդկանց վոտքերի և կենդանիների պճեղների տակ։ Թաթոսի այդ արտի ծայրը գալիս, դյուղի վերջին մարագի պատի տակ հատնում եր։ Թաթոսն ուզում եր, վոր հողից մի թիզ ել առանց վարել չմնա, դրա համար ել դութանի յեղը պատին քսվելով եր թեք գալիս մյուս ակոսը քաշելու։

Այդ որերին ճանապարհով անցնողը, յեթե ուշադիր նայեր, կնկատեր, վոր մարագի պատը մի մարդաբոյ բարձրության վրա մի տեսակ սևացել և լծկանի մեջքը քսվելուց, հետո յել յեղան կարմիր մազեր են կպել չեչոտ քարերին։ Մի քանի որից հետո անձրևը ծեծում եր պատի քարերը, վեր անում սև գույնն ու մազերը, մաքրում պատը։

Ամեն մի գյուղացի ինքն եր մշակում իր հողը, ինքն եր իր կալի մոտ տանում իր մանգաղի հնձած մինչև վերջին հասկը· դեռ չեյին վերացել արտերի սահմանները։

Այդպիսի 4—5 տարի յեր անցել Զորաչենի ու նրա դաշտերի վրայով։

Գյուղն ընկած եր լերկ սարերի փեշին ու թեև Զորաչեն եր կոչվում, բայց գյուղը վոչ ձորում եր գտնվում և վոչ ել նրա մոտ ձոր կար։



***

Նրանք հարևաններ եյին —Բարսեղն ու Թաթոսը։ Նրանց տները Զորաչենի ծայրին ընկած եյին կողքկողքի, մի կարճ տարածությամբ կտրված մյուս բոլոր տներից։

Թաթոսն, ինչպես ասացինք, չքավոր տնտեսատեր եր և ուներ են, վորին չեր նախանձի մի ուրիշ չքավոր։ Նրա գոմի ախոռում կապած եյին լինում մի ցլեկ, մի մոզի և մի կով։

Բարսեղն ել միջակ եր։ Ամեն առավոտ նրա գոմից դուրս եյին գալիս և ջրի գնում մի լուծ յեզ, յերկու մոզի, մի գոմշաձագ, մի եշ և յերկու-յերեք մոզիմզուր։ Մանավանդ գարնանը, յերբ որը պարզ եր լինում, դուրալի և գետնից հողի գոլորշին եր բարձրանում ու կանաչի բուրմունքը, սուր պոզերով յեզները գոմից բառաչելով եյին դուրս գալիս, մոզիներն ել նրանց յետևից «կետ» եյին անում պոչները վեր ցցած։ Գոմշաձագը տրընգում եր կոկորդային ուժեղ ձայնով և վազում դեպի աղբրի մոտի գոլը։ Իսկ եշն անջատվում եր բոլորից և գլուխը բարձր բռնած ու գարնան զով ոդը հոտոտելով բախչում զռռալով։

—Զո՛շ··· չո՛շ,— ղվարճանքով բղավում եյին կտուրներին և ճանապարհներին կանգնած գյուղացիները։ Նրանք ձմեռվա ընթացքում փակված եյին յեղել և գարնան բացվելու հետ ամեն ինչ ուրախացնում եր նրանց, բնության պես բացում նրանց սիրտը։

Գարնան այդ առաջին որերին գյուղացիները տնից դուրս եյին գալիս, ձեռքները ճակատներին դրած կամ վափախների տակից խորասուզված նայում ձյունի տակից բացված սարերին, բլուրներին ու դաշտերին։ Ամեն

մեկը հայացքը դցում էր հեռուն, յերկար նայում և աշխատում հողերի մեջ ջոկել իրենը, նկատել, թե արդյոք կանաչի՞ն է տալի արտը:

***

Այն որը Թաթոսը ՓՈԿ-ի ժողով էր գնացել: Ցերը վերադարձավ տուն, կնոջ հոնքերը թթված տեսավ: Թաթոսը հետաքրքրվեց.

— Հը՛, Ասանեթ, ի՞նչ ա պատահել:

Ասանեթը լավաշի պես բարակ շրթունքներն սկսեց բարկացկոտ կրծոտել և վոչինչ չպատասխանեց:

— Քեզ հետ ել խոսել չի լինում, ելի: Հլա ասա տեսնենք ով ա թանիդ թթու ասել:

— Ել ո՞վ պիտի լինի,—վերջապես Ասանեթը բերանը բաց արեց,—քո բարի պտուղ հարեվանը:

— Հը՛մ,— քթի տակ մղզացրեց Թաթոսը, հիշելով Բարսեղին և մտածկոտությամբ գետնին մի կետի նայեց:

— Բարսեղը, հա՞: Բա ի՞նչ ասավ,—հետաքրքրությամբ ու ճմլվող սրտով հարցրեց նա:

— Ամեն ինչ,— լվացքի տաշտի վրայից գլուխը բարձրացրեց Ասանեթը,— դու վոր լեզու ունենաս, քեզ խոսք ասողին կարենաս հարմարին ջուղաբ տալ, նա յել ըսենց չի անիլ:

— Ասելո՞ւ յես, թե ինչ ա յեղել:

— Են ա յեղել, վոր յերեխիդ մի լավ ծեծեց, քիթ ու պռունգը ջարդեց:

— Խի՞...

— Ընդուր, վոր նրա եշը ելի արտն էր ընկել: Ցերեխին ուղարկեցի, վոր եշն արտից հանի. գնաց ձեռքի ճիպոտով մի քանի անգամ եշին հասցրեց: Տենամ են-



տեղից Բարսեղը վրա պրծավ յերեխի վրա: Տո՛ւր թե կտաս քորփի վզակոթին: Համբերությունից դուրս յեկա: Ինչ անպատիվ խոսք կար, ասինք իրար: Նա ինձ՝ յես նրան, նա ինձ՝ յես նրան: Ցես ելի մի քիչ աբուռս քաշեցի, համա նա բերանի կապը բաց էր թողել:

Հուզմունքից թե ամոթից Ասանեթի այտերը կարմրեցին և յերկու բուռնցքով սկսեցին ավելի ամուր սեղմել լվացքի շորերը:

— Ասում ես անպատվեց, ելի՞,— ինքն իր մեջ հուզվեց Թաթոսը, հոնքերը կիտեց:

—Անպատվելն ել խոսք ա՞: Ել ղախպա ու աննամուս չթողեց, յերեսովս տվեց:

— Հը՛մ,— ծրրաց Թաթոսը և յերեսը դանդաղ թեքեց կնոջից և գետնին նայելով սկսեց խոր մտածել: Այնքան լարվեց մտքերի հետ, ասես նա հենց այդ պահին մի շատ խիստ դատավճիռ էր հանում կնոջն անպատվողի դեմ:

— Դու վոր մարդ լինես,— խռովածի նման գանգատվեց Ասանեթը,— նրան դյուղխորհուրդ քարշ կտաս, դատարան քարշ կտաս: Ի՞նչ ա, մենք ենք հարազա՞տը, թե նա: Հո՞ղս նրա գլխին: Ել հո հին դովրանը չի, վոր մեկը մյուսին ճնչի: Ես մին ու յերկու հետ չի: Ըսհենց հարևանություն չի լինիլ:

—Լա՛վ, լա՛վ,—այնպես հպարտ ձայնով խոսեց Թաթոսը, վոր ասես ուզում էր ասել՝ «ինչ հարկավոր ա, յես կանեմ, յես կգամ նրա հախիցը»:

— Կտեսնենք,— իր դիրքերն ամրացրեց Ասանեթը:

Թաթոսը մոլորված մի քանի քայլ առաջ ու յետ անելուց հետո վճռական քայլերով դուրս գնաց: Մտքում վորոշեց՝ «աչք չճպել» Բարսեղի առաջ, սրտի մաղձը

թափել նրա գլխին։ Իսկ հենց վոր դրսում տեսավ Բարսեղին, խստությունը մեղմացավ։ Մոտեցավ նրան։ Բարսեղը փայտ եր ջարդում։

— Բարի որ,— մի անորոշ ձայնով ասաց Թաթոսը, վորի մեջ կար և քաջվածության և համարձակության շեշտ։

— Բարի որ,— բավական ուշ և սառը պատասխանեց Բարսեղն առանց նայելու Թաթոսին։ Նա նույնիսկ փայտ ջարդելը չդադարեցրեց։ Թաթոսը վիրավորվեց դրանից։ «Վո՞նց թե», մտածեց նա հոնքերը կիտելով, վոր լայաղ չի անում կարդին պատասխանել։

— Հարցնելն ամոթ չլինի, ինչի՞ յես կնգանս անպատվել։

— Նա յել ինձ ա անպատվել։

— Ախպեր, հերիք յեղավ, բոլ յեղավ. ըսհենց հարևանություն չի լինի։ Սաղ տան ումուղն ես մի արտն ա, են ել մի կողմից ճամբվորն ա վոտնատակ տալիս, մյուս կողմից ել անասուններդ են ուտում, փչացնում։ Եշդ... գոնե եշդ կապած պահեցեք։

— Ես չեմ կարող քո պատճառով եշս ու անասուններս ծախել։ Եշ ա՝ անասուն ա՝ դոմից դուրս գալիս կամ արոտից տուն գալիս արտի ծերիցը մի քանի հասկ են քաշում։ Սաղ գեղն ա արտիդ միջովը կածան դցել. սաղ գեղի անասունն ա վոտնատակ տալի։ Թե սիրտդ եղքան ցավում ա աշխատանքիդ համար, չափար քաշիր արտիդ կողքովը։

— Ցես ուժ ու կարողություն ունե՞մ եղքան աշխատանքի համար,— խեղճացած պատասխանեց Թաթոսը, իսկ քիչ հետո սիրտ առավ.

— Սրանից հետո, վոր մին ել անասուններից դ



մեկն ու մեկին տեսել եմ արտս ընկած, պոզերը կջարդեմ։

— Ի՞ի՞նչ,— հուզվեց Բարսեղը, ականջներն ու այտերը կարմրելով,— ո՞ւմ պոզերը կջարդես, հը՞։

— Եշիդ պոզերը,— ու քթի տակ ինքն իր ասածի վրա միամտորեն ժպտաց Թաթոսը։

— Տո, մարդ, եշը պոզեր չունի,— բարկության և ժպիտի խառնուրդով պատասխանեց Բարսեղը։

— Պոզեր չունի, գլուխ ունի, գլուխը կջարդեմ։

— Քո գլուխն ել յես կջարդեմ,— սպառնաց Բարսեղը և թշնամական հայացք գցեց Թաթոսի վրա։

— Դու վերջերս շատ ես յերես առել հա՞, ել որենք չես ճանաչում,—խոսելով հեռացավ Թաթոսը։

***

Գարունն որն-որին դաշտերից քաշում եր իր փեշերը և ամառն եր արտերի վրա խաղում արևի վոսկե թևերով։

Այդպիսի մի որ եր, վոր Թաթոսն սպասողական դրությամբ կանգնել եր իր արտի ծայրին։ Նա սպասում եր վորևե մեկին, վոր յեթե գա ու անցնի իր արտի միջի կածանով, կոխի բարձրացնի, սրտում կուտակված թույնը թափի նրա վրա,— ով ել վոր լիներ այդ մարդը։

Թաթոսը նայում եր արտովն ընկած կածանին, ջարդված ու չորացած հասկերին և սիրտը մղկտում եր կսկծից, քթիցը մուխ եր դուրս գալիս։

Թաթոսը հիշեց, վոր ամեն տարի արտը նույն որին է ընկել,— ջարդել են հասկերը և մի քանի կալ հաշանից միայն մի ջվալ հատիկ է ստացել։ Տան ցորենը հերիք չեր անում... Ձենը փորը գցած դիմել եր

մի քանի ունեվորի, վոր մինչեվ կալը մի քանի խան ցորեն տան, բայց նրանք փոխարենն իրենից պահանջել եյին հնձի որերին շաբաթներով աշխատել իրենց համար: Թաթոսն եվ գլուխը քորելով յետ եր ադրձել և դնացել իր դրության մասին ՓՈԿ-ի նախագահին քաշվելով պատմել: Նախագահը ժպտացել եր անկեղծ և ձեռքը դրել Թաթոսի ուսին.

—Վա՛յ, Թաթոս ջան...Ադա, բա ամաչո՞ւմ չես, վոր մեզ թողած, կուլակների մոտ ես դնացել:

Ու ՓՈԿ-ը փոխարինաբար ցորեն եր տվել Թաթոսին:

Եսպես մտածելով ու ինքն իր մտքերի հետ զրուցելով Թաթոսը կամաց դնում եր դեպի արտի մյուս ծայրը: Մեկ եվ հանկարծ նկատեց, վոր իրենից մի քիչ հեռու, արտի միջին մի ինչ-վոր բան սևին և տալիս: Թաթոսի սիրտը խփեց... «Անպատճառ անասուն ա արտը մտել»: Ու առաջ դնաց՝ աչքը սև կետին դցած: Ահա շարժվում է նա տեղում... Ու Թաթոսն առաջ և դնում շունչը պահած... «Տեսնես ի՞նչ պիտի լինի արտը մտած» մտածում եր ու դնում:

Ինքն եվ հեռվհետե մոտենում եր սև կետին և վորքան մոտենում եր, այնքան մեծանում եր կետը: Վերջապես հասկերի վրայով պարզ յերեվաց ինչ-վոր կենդանու մեջք:

— Տեսնես եդ ո՞ւմ անտեր անասունն ա,— վրդովվեց Թաթոսը: Վերջապես քիչ հետո կենդանին գլուխը բարձրացրեց— Բարսեղի եշն եր: Նա ականջներն առաջ սրեց, աչքերը լարեց դեպի Թաթոսի կողմը: Թաթոսը մտավ արտը և արագ քայլերով դնաց եշի կողմը: Եշն ընդհատեց իր վորոճալը և լուռ դիտեց յեկողին: Յերկու ծամած հասկ կախ եյին ընկել նրա շրթունքների արանքից, իսկ շուրջը մի կալի չափ ցողունները հասկահան եր արել, մի տեղ եվ թավալ տվել, հողը բացել: Թաթոսը վոր նկատեց այդ, աչքերը մթնեցին և ուղեղում ասեղների ծակոցներ զգաց, մարմնով թեթև ցուրտ անցավ: Մի պահ նրա մտքովն անցավ, վոր ահա քանի տարի յե Բարսեղի անասունները փչացնում են իր արտը: Կսկիծը սիրտը տվեց, և յեթե ձեռքին փայտ կամ քար ունենար, եվ ահ չեր քաշիլ և կջախջախեր եշի գլուխը: Բայց վոչ փայտ, վոչ եվ քար ուներ ձեռքին: Թաթոսն իրեն կորցրած վազեց դեպի եշը և սկսեց վոտքով ուժեղ քացիներ տալ եշի կողքին: Սակայն եշը վոչ թե փախավ, այլ տեղը կանգնած մնաց և հանկարծ յետևի վոտքի սմբակով մի պինդ հակահարված տվեց Թաթոսին:

Եշը պայտած եր և Թաթոսը հարվածից մղկիտ զգաց: Նա ավելի կատաղեց: Հանկարծ մի բան հիշեց, վորը լուսավորեց նրա միտքը: Մի ակնթարթում դանակը հանեց գրպանից և բռնելով եշի ականջներից մեկը՝ կտրեց կեսից... Եշն աղիողորմ ձայներ հանեց և զռռալով փախավ դեպի գյուղը:

Արյունը կաթկթել եր հասկերի և հողի վրա:

Եշը դեռ դնում եր...

Թաթոսի սիրտը հանդստացավ: Արյունոտ դանակը ծալեց և դրեց գրպանը: Վրեժն եշից լուծելուց հետո այժմ եվ նրան մի տեսակ սառնություն եր պատել: Եշի կտրած ականջի կեսը ձեռքում բռնած, սառել եր տեղում կանգնած և չեր իմանում ինչ անել: Հանկարծ նկատեց, վոր գյուղի կողմից մեկը վազելով դեպի իրեն կողմն եր դալիս: Չեր յերևում թե ով եր: Բայց վազում եր առանց թափը դանդաղեցնելու: Բայլվածքը Բարսեղին եր հիշեցնում: Մի տասը քայլ վազելուց հետ

տո ավելի պարզ յերևաց: Ճիշտ վոր նա յեր, Բարսեղը··· իր հարևանը: Ահա նա անցավ եշի մոտով, տեսավ կտրած ականջը և արյունը գլուխը տվեց:

Բոլորովին մոտեցավ Թաթոսին: Թույնը Բարսեղի սրտում կուտակված՝ վրեժով նայեց Թաթոսին, վորպես վոխերիմ թշնամի.

— Տո չո՛ւն-չանվորդի, դու եղքան սիրտ ունես, հա՛,— գոռաց նա և մոլուցքով հարձակվեց Թաթոսի վրա: Մինչ Թաթոսը ցանկանում եր կռանալ և ձեռքը քար գցել, Բարսեղը փեշի տակի փայտը հանեց և ոգում ճոճելով մի քանի անգամ վրա բերեց հակառակորդի թիկունքին: Թաթոսը, վոր կազմվածքով թույլ եր, չկարողացավ դիմադրել: Բարսեղը նրան գետին գլորեց և մի քանի անգամ ել քացի հասցրեց մեջքին, կողքերին: Թաթոսը ցավից չկարողացավ շուտ վեր կենալ և նվոցի միջից թույլ ձայնով սպառնաց.

— Ուժդ ես փորձում հա՛···

Մի քանի քայլ գնալուց հետո Բարսեղը յետ նայեց: Թաթոսն ընկած տեղից վեր եր կացել և փափախն եր թափ տալիս:

Մի քանի որից հետո ձորաշենցիք միմյանց պատմում ու լսում եյին Բարսեղի եշի կտրած ականջի պատմությունը:

Գյուղխորհրդի նախագահը՝ Սարգիսը և ուրիշ մի քանի հոգի յեկան հարց ու փորձ արին Բարսեղին ու Թաթոսին, տեսան կերած արտը և եշի կտրած ականջը:

Բարսեղը ցույց եր տալիս եշի կտրած ականջը և նախագահից պահանջում.

— Եդ անամոթ արարքի համար դրան պետք է տուգանեք:

— Զարժե,— պատասխանեց Սարգիսը,— լավ չի



արել, դրա համար մենք նրան նախատում ենք իհարկե, համա քյասիբ մարդուն ի՞նչ տուգանես: Եդ ա եշիդ ականջը կապել ես, կսաղանա: Իսկ դու շատ մեղավոր ես, վոր ձեռք ես բարձրացրել նրա վրա: Դրա համար որենքը կպատժի քեզ: Հետո պտի հետևես ա-նասուններիդ, վոր ել եդ մարդի արտը չընկնեն:

Հանձնաժողովը վորոշեց, վոր Բարսեղը յերկու շաբաթ հասարակական ձրի աշխատանք կատարի Թաթոսին ծեծելու պատճառով:

Բարսեղը դժգոհեց, թոնթորաց, քթի տակ հայհոյեց նախագահին ու Թաթոսին:

Եդ որից Բարսեղն ու Թաթոսը կտրեցին իրենց հարևանությունը: Նրանց կանայք ել չեյին միմյանց հետ խոսում ու ամեն մի դատարկ առիթով կռվում եյին:

— Աղքատ հալովդ խելոք չես կենում,— հեգնում եր Վարդիշաղը, Բարսեղի կինը:

—Անխելք: Հիմա աղքատ ու հարուստ չկա: Աղքատ եմ, համա սիրտս բաց ա, գեղում իրավունք ունեմ, գեղամեջը մեզ նմաններինն ա: Դու յել չես քո ոգուտը հասկանում,— հպարտանում եր Ասանեթը:

Եդ որերին եր, վոր Բարսեղը քարերով, փայտերով ու 2 կոտրած սայլով պատնեշ սարքեց իր և Թաթոսի տների միջև:

2.

Տարիները շատ եյին առաջ տարել Զորաշենը և շատ բան եր փոխվել նրա կտուրների տակ:

Գյուղում կոլխոզ եր կազմակերպվել և նա իր թեվերի տակ եր առել 15 չքավոր և միջակ տնտեսություն:

Թվով քիչ եյին, բայց լի համոզմունքով ու յեռանդով եյին կպել գործի: Մտել եյին նրանք, վորոնց սրբ-

տի կրակը կոլխոզի համար եր վառվում, լուսաշող ապագայի համար:

Շրջանի և տեղի ընկերները մի ամբողջ տարի նախապատրաստվել եյին կոլխոզի համար: Բայց ինչո՞ւ մի տարի: Մի՞թե նրանց տասը տարվա պայքարը չեր հարթել կոլխոզի ճանապարհը:

Կոլխոզի կազմակերպման որերին շրջկենտրոնից շուտ-շուտ ընկերներ եյին գալիս: Նրանք հավաքում եյին կոլխոզնիկներին, նրանց կանանց ու յերեխաներին և յերկար զրուցում նրանց հետ: Մի քանի որ հետո յել մի գյուղատնտես ձիուն նստած Զորաշեն մտավ և ել չվերադարձավ: Ընկեր Ստյոպան,— գյուղատնտեսը, կոլխոզում աշխատելու համար եր յեկել: Միայն կոլխոզում: Անչափ ուրախություններից կոլխոզնիկների վոտքն եդ որը գետնին չեր առնում, ասես հարսանիք լիներ նրանց համար: Գիտության լեզուն և ուժն եր յեկել նրանց ոգնության: Ցերը մի կոլխոզնիկ ցանկացել եր գյուղատնտեսի ձիու սանձը բռնել, նա չեր թողել և «ծտի պես» թռել եր թամբի վրա:

— Գեղի կյանքին սովոր մարդ ա յերևում, կարա յերկար մնալ,— յեզրակացնում եյին կոլխոզնիկներն ու մյուս ձորաշենցիք:

Գյուղատնտեսը որվա մեծ մասը կոլխոզնիկների դոմերում, տներում, այգիներում ու դաշտերում եր անցկացնում: Ծանոթանում եր նրանց նիստ ու կացին և ցանքը, անասունը ու մյուս ունեցվածքը պահելու և մշակելու ձևերին:

Կոլխոզնիկներից շատերը դժվարանում եյին Ստյոպա կանչել: Ստեփան դարձրին: Ստյոպան ուրախացավ նրանց պարզամիտ և անկեղծ այդ վերաբերմունքի համար: Նա կոլխոզնիկների հետ յերկար չըրջում եր իր անբաժան ձին յեռևից քաշելով, տնտղում կոլխոզնիկների դոմերը— մուրը, հատակը, առաստաղը, փոքրիկ լուսանցքները: Հետո յել՝ մարդի դարմանն ու խոտը:

— Դոմերը շատ են մութ ու խոնավ, կերն անկանոն եք տալիս, անասունը լղար է,— մտածմունքով ասում եր նա: Ու սկսում եր բացատրել, թե ինչ կերից ինչքան պետք է տալ անասունին և որվա վոր ժամերին:

— Վոչինչ,— ավելացնում եր նա հոգոց քաշելով,— շուտով մի որինակելի ընդարձակ գոմ կշինենք բոլորիդ անասունների համար, վորը ձեր տներից լուսավոր կլինի:

— Ձե, ընկեր Ստեփան,— մեղավորի նման ասում եյին կոլխոզնիկները,— մենք ըսհենց բաներ չենք գիտեցել և մեզ շանց տվող ել չի յեղել. մեր բոլոր հաշիվները գեղավարի, չորանավարի յենք տարել: Հմի կոլխոզն ա մեր փրկության դուռը: Նա պտի մեզ ես յետամնաց դրությունից հանի:

— Այո՛, կոլխոզը ձեր կյանքը, մեր բոլորիս կյանքն է առաջ տանելու, բոլորովին նոր պայմաններ ստեղծելու,— համոզմունքով ավելացնում եր Ստեփանը:

— Բայց սոցիալիստական ճանապարհով,— անհամբեր մեջ ընկավ մի ջահել կոլխոզնիկ կոմյերիտական:

— Իհարկե, իհարկե,— և Ստեփանը ձեռքով դուրգուրեց նրան: Ու նա կոլխոզնիկների հետ, իր ձին յեռևից քաշելով առաջ եր շարժվում դեպի մի այլ կոլխոզնիկի տնտեսություն, հեռաղոտելու նրա այդին, հողը, գոմը, տալու հարկավոր խորհուրդներ:

Ցերեկները գյուղատնտեսական խնդիրների մա-

սին զրույցներ եր ունենում կոլխոզնիկների և նրանց ընտանիքի անդամների հետ։

Այդ զրույցների ընթացքում Ստեփանը յերբեմն զանազան թվեր ու մտքեր եր թելադրում կոլխոզնիկներին և նրանք ել գրում եյին իրենց ձեռքի տետրերում։

***

Կոլխոզնիկների հողերն ու անասունները միացվեցին։ Յերբ գյուղում հողաբաժանում կատարվեց, բոլոր կոլխոզնիկների 65 որավար հողը զեմլեմերը միատեղ չափեց։

Մի ամիս եր, վոր որինակելի ընդարձակ գոմ եյին կառուցել։ Գոմը բաղկացած եր 3 մասից և 15 տնտեսության անասուններին տեղ եր անում։ Հարևան գյուղացիները, յերբ գործով Զորաշեն եյին գալիս, անպատճառ ճանապարհները թեքում եյին և գնում կոլխոզի գոմը տեսնում։

— Ես հո մեր ոթախներից ել լավն ա,— ասում եյին նրանք և հիացմունքից «ծը՛հ-ծը՛հ» անելով դուրս գալիս։

Հենց կոլխոզը կազմակերպելու աշնանից վերը, ցանքն ու մյուս բոլոր գյուղատնտեսական աշխատանքներն Ստեփանի ցուցմունքներով եյին տարվում։ 65 որավար հողը վոչ մի սահման չուներ— չե վոր նա մի ընտանիքի յեր, կոլեկտիվ ընտանիքի։ Իսկ կոլխոզնիկները գյուղի առաջավոր, ամենքից գիտակից մասն եյին և նրանք գիտեյին, թե ինչ են անում։

Զորաշենի կոլխոզի առաջին ամառն եր. եդ տարվա բերքը գյուղում առատ եր, իսկ կոլխոզի հողերը չտեսնված բերք տվին։

Յերբ հասկերը ցողունների վրա ծանր որորվում



եյին, դեռ են ժամանակ կոլխոզնիկներն զգում եյին, թե ինչպիսի բերք են ստանալու։ Կոլխոզի 9 սայլը 3 որ ճռնչալով ծանր խրձեր եր կրում կալերի մոտ։

Արտերը հնձելուց հետո ծղնոտի տակն աշնան ցել արին, իսկ մյուս գարնանը, կոլխոզնիկների բակերում ինչքան վոր աղբ կար, սայլերով կրեցին հողերը։ Կոլխոզը դեռ աշնանից սերմացուցիչ եր ստացել և աշնան ու գարնան սերմը զտեց ամեն աղբ ու փուչ հատիկից և մնաց միայն «ծտի ձվի չափ» սերմացուն։ Բջիջի հետ միասին բացատրական կամպանիա տարան սերմերը զտելու առթիվ և գարնանը ձորաշենցիներից չատերը կոլխոզի սերմացուցիչով զտեցին իրենց սերմը և այնպես հողը դցեցին։

— Կամաց-կամաց հողերը կարգի կդցենք,— զրուցում եր Ստեփանը կոլխոզի նախագահ Վաչագանի հետ,— աշնանից յեռադաշտյան սիստեմի կանցնենք, ամեն մի տեսակ հողում իրեն հարմար բան կցանենք։

Ու եդպես Վաչագանն ու Ստեփանը յերկար քննում եյին կոլխոզին վերաբերող հարցերը, մտածում, թե ինչ ճանապարհներով առաջ տանեն գործերը։

Աշխատանքի խիստ բաժանում եր կատարված։ Ամեն մեկը գիտեր, թե ինքն ասոր ինչ գործ է անելու։ Գործն ել արվում եր ըստ կարողության։ Այսինքն՝ ով ինչ գործ գիտեր, են եր անում, ով ինչ արհեստ գիտեր, նրանով եր զբաղվում։ Եդ բոլոր հարցերն իրենք, կոլխոզնիկներն եյին իրենց ժողովում վորոշում։ Ամեն մեկը գիտեր, թե ինքն ինչ աշխատանք է տանելու, քանի ժամ է աշխատելու, ամեն մի ժամ ինչքան է գնահատվելու, ուրիշ ինչ աշխատանք է տանելու և այլն։ Եդ բոլորի մասին 10 որը մեկ անդամ ցուցակ եր կազմվում և փակցվում կոլխոզի պոքրիկ վարչական յակում։

13810-57 1464
ՀՍՍՀ — ՍՍՌՄ
Գ. Մասնիկյան
Ս. Մեհրաբյանի անվան

***

Ժողովներից մեկում կոլխոզի նախագահ Վաչագանը հարց դրեց՝ «քանի վոր վոտներս բավական պնդացրել ենք գետնին, խոշոր հաջողություններ ենք ձեռք բերել, կոլխոզը փարթամացրել ենք, ուստի յես առաջարկում եմ նոր ընդունելություններ կատարել:

Գլուխները սկսեցին մտածել:— Իհարկե կարելի յե,—յեղրակացրին նրանք,—սկզբից եր, վոր վախենում եյինք, թե չլինի՞ կոլխոզը քայքայվի: Համա հմի՞: Հմի շատերը կգան մեզ հետ:

Վաչագանի առաջարկը սիրով ընդունվեց բոլորի կողմից:

Հետո հենց նույն ժողովը վորոշեց՝ «ընկեր Ստեփանին ուղարկել կենտրոն, վոր ինչ գնով եել լինի, մի տրակտոր ձեռք բերի: Ընդգծել, վոր առանց տրակտորի վարը հացնում չենք, ուշանում ա իր ժամանակից: Նմանապես լիազորել Ստեփանին, վոր մսլահաթ անի վերևի ընկերների հետ, բացատրի նրանց, վոր յեթե տրակտոր տան, նա բոլոր կոլխոզնիկներից ավելի լավ ագիտատոր կլինի և հետո՝ սաղ Զորաչենը կգա մեր յետևից»:

***

Շատերն եյին դիմում տալիս կոլխոզ մտնելու համար: Թաթոսն եել տվեց: Ցերը կոլխոզը նոր եր կազմակերպվում, չմտավ, սիրտ չարավ: Են ժամանակ կասկածում եր, թե արդյոք «գլուխ կհանի՞» կոլխոզը: Բայց կոլխոզի մի տարվա փորձը Թաթոսին ու շատերին համոզեց, վոր սարի ու ձորի տարբերություն կա իր, կոլխոզի և անհատական տնտեսության մեջ:



— Համոզմունքո՞վ ես դիմում տալիս,— հարցրել եր Վաչագանը Թաթոսին,— խո կասկած չկա...

— Սկի,— վճռական պատասխանել եր Թաթոսը և արխալուղի գրպանից հանելով դիմումը, դրել եր սեղանի վրա,— սրտով եմ գալիս, վոչ մի թիքա կասկած:

— Լավ, կքննենք, կընդունենք,— ասել եր Վաչագանը:

Ցեվ իսկապես: Ցերկու որ հետո Թաթոսը նորից գնաց Վաչագանի մոտ և դրական պատասխան ստացավ:

Ուրախությունից Թաթոսի տամարները խաղում եյին: Ինքն եել յետ չի մնա մյուս կոլխոզնիկներից, իր ապրուստն եել կմիացնի նրանց ապրուստին: Ուրիշ ճանապարհ չկա: Առանձին ապրելով ի՞նչ լավ որի յե հասել 40 տարում, կամ թե իր հերն ու պապը, վոր սրանից հետո ինքն ինչ որի հասնի:

Իսկ կոլխոզը... Մի տարում հրաշքներ գործեց: Հապա յեթե տրակտոր ստանան, մի քանի տարի անցնի, են վախտը դու տես, թե ինչեր կանի...

Թաթոսը խնդալով տուն գնաց, հասնելուն պես Ասանեթին դրկեց, մի պլինդ համբուրեց, համա Ասանեթը կատաղեց, զարմանալով նրա այդ անսովոր վերաբերմունքի վրա: Իսկ յերբ Թաթոսը պատմեց իր արարմունքի պատճառը, Ասանեթն ուրախացավ:

— Լավ ես արել: Կոլխոզում յես եել լավ կաշխատեմ ու քեզանից պակաս կոլխոզնիկ չեմ լինի:

— Բա, Ասանեթ ջան, ինձանից պակաս կոլխոզնիկ չպիտի լինես:

***

Բարսեղի ու կնոջ մեջ կռիվ եր ընկել: Կինը պահանջում եր, վոր շատ չքավորների ու միջակների որի-

նակով իրենք էլ կոլխոզ մտնեն։ Են վոր ամուսինն եր, կողին եր ընկել և դեմ եր կոլխոզ մտնելուն։

— Ուրիշների զուռնի տակ պար ես գալիս,— ասում եր կնոջը,— հլա մի տարի յել սպասենք, են վախտը կտեսնենք։ Հետո յես վո՞նց իմ աչքի լուսի պես պահած, մեծացրած անասունները տանեմ ուրիշի անասունին խառնեմ... Մին էլ ես՝ քանի վոր Թաթոսը մի գործում խառն ա, յես են գործին մոտ չեմ գնալ։

— Ա՛խ... Ուրիշի անասունները վոր կոլխոզում են, պակաս են պահո՞ւմ... Գլխիդ արևը գիտենա, վոր դու նրանցից լավ կպահես ա՛յ... Հլա մի գնա նրանց պլպլան գոմը տես ու են վախտը խոսա։

Բարսեղը, ճիշտ է, ինքն էլ եր իր ներսում զգում, վոր կոլխոզը խոշոր նվաճումներ ունի, նրա և անհատական տնտեսության տարբերությունը մեծ է, բայց քանի վոր աչքով-աչք չուներ Թաթոսի և նախագահի հետ, եդ պատճառով էլ չեր ուզում նրանց հետ գործ բռնել, նրանց հետ միասին տարին չորս յեղանակ աշխատել։ Բարսեղը յերբեք չեր մոռանում, վոր նախագահի վորոշումով ինքը յերկու շաբաթ մեջքը կռացրել, ձրի աշխատել եր գյուղի համար։ Եդ պատճառով էլ նա միշտ նինխում եր նախագահի հասցեյին։

3.

Զորաշենի կուլակները— Քուստուլանց Վարդազարը, Ճուղուրանց Մադին և Քոսանց Հարութը նստել եյին ոդայում, վառվող բուխարիկի շուրջը և անհամբեր սպասում եյին, թե ինչ լուր կբերի Աթանեսը...

Բուխարիկը խավար ոդայում հանդարտ մխում եր, յերբեմն էլ ճրճտում եյին փայտերը։



Լռությունը շարունակվում եր։ Նստածներն աչքները գցել եյին վառվող կրակին և նրանց վորոճող մտքերն էլ յերբեմն առկայծում եյին կրակի նման, յերբեմն էլ մթնում, ինչպես ոդայի խավար անկյունները։

Դուռը կամաց ճռռաց։ Բոլորն-իսկույն յետ նայեցին։ Նրանք աչխատեցին հենց առաջին հայացքով կարդալ Աթանեսի դեմքի և աչքերի արտահայտությունը։

Աթանեսը մթնած դեմքով եր։ «Չի համաձայնվել»— իսկույն անցավ բոլորի մտքով։

— Զեյի ատո՞ւմ, վոր չի համաձայնվիլ,— տեղում շարժվելով պարծեցավ Վարդազարը։

— Ի՞նչ ասավ,— Աթանեսին անհամբեր հարց տրվին Հարութը և Մադին։

Աթանեսը չուխայի թևերը յետ քաշելով նստեց նրանց կողքին, քոթուկի վրա և սկսեց.

— Են մարդը, Բարսեղը, ասում ա. «Դրուստ ա, յես չեմ ուզում կոլխոզ մտնել, նախագահը հետս լավ չի, համարյա թշնամի յենք, համա յես չեմ կարող նրան սպանել. յես իմ ձեռքերն ուրիշի արյունով չեմ շաղախիլ։ Թե ուզում եք, դուք սպանեցեք»։

— Բա չասի՞ր, վոր առանց են էլ մեզ վրա չեկիստի աչքով են նայում ու քեզ ենքան փող ու ապրուստ կտանք, վոր մինչև քո մահը քեզ հերիք կանի,— լարված հարց տվին Հարութն ու Մադին։

— Ոխտը հետ ասի, ոձի լեզու բանացրի, համա նա թե՝ «Զե վոր չե, եդ բանն ըլել չի», ասում ա. «Դուք ուզում եք ինձ Սիբիր քշեն, ըրեխեքս էլ սովից մեռնե՞ն», ասում ա։

— Ախը ասում եյի, վոր չի համաձայնվիլ է՛,— նորից հպարտորեն կրկնեց Վարդազարը և նստած տեղն ամրացրեց, վոր իր կարծիքը ճչավեց։

— Դո՛ւ յե՛լ...— բարկացան Վարդազարի վրա,— կնգա նման հավի արին թափելուց ել ես վախենում։ Մինչև դրանից մի քանիսի արինը չխմենք, մենք չենք կարող կոլխոզի գործերը խափանել, մեր նպատակին հասնել...

— Ամենից հարմարն ու մեզ ձեռնտուն են ա,— հոնքերը վեր քաշեց Մադին,—վոր կոլխոզի նոր գոմը պաժառ գցենք. գոմապահին կկաշառենք և գոմի բոլոր ծակուծուկը կկալնենք. են վախտը մի անասուն ել չի ազատվիլ կրակից ու ծխից։ Դա ամենամեծ վնասը կլինի կոլխոզին։

— Ձե,— սառարկեց Վարդազարը,—պաժառը չուտ կիմացվի, սաղ գեղը վրա կհասնի, կրակը կհանգցնի ու վնաս չեն ստանալ։ Համա ինչ գիտես, վոր Թալաքի մեջ չես ընկել։

— Միսներս կերան, վոսկորներս Թողին,— բորբոքվեց Հարութը,— ա՛խ, Թե մեր որերն ելի կգա՞ն, յես դրանց կոլխոզ չանց կտամ։

— Դե, գիշերը կես ա ըլում, ցրվենք,— քոթկի վրայից վեր կացավ Աթանեսը, չուխի փեշերը բաց Թողնելով։

— Բան ա, Թե վոր մարդ պատահի ու մեկն ու մեկիդ բան հարցնի, կասեք հիվանդի կշտից ենք գալիս,— ցածր ձայնով խոսեց Հարութը և ճրագի լուսով մինչև գոմի դուռը ճանապարհ գցեց նրանց ու նորից շարունակեց,— ամեն մինս պտի մեր հարևան մի քանի քասիբի բերան վոսկոռ գցենք, աչքները Թոզ փչենք ու նրանց կոլխոզի ու գեղական աշխատողների դեմ բողոքավոր գուրս բերենք... Նրանցով մենք շատ բան կանենք։ Եզուց ել խմաց չեմ տալ։ Ժանդարքին



կգա՞ք, կմտածենք, խելք-խելքի կտանք, տեսնանք ինչ ենք անում։

Վարդազարը, Մադին և Աթանեսը Հարութին լսելուց հետո հերթով «բարի գիշեր» ասին նրան և գոմի դուռը բացելով հալվեցին մթում։

Ամպերի սև դեղերը ծածկել եյին լուսինը, գյուղը կորել եր խավարի մեջ։ Ցեվ վոչ վոք չտեսավ, վոր յերեք մարդ դողի նման կուզեկուզ ցրվեցին իրենց տները։ Միայն Աթանեսը գյուղի ծայրին եր ապրում, ցանկացավ կտուրներով կարճել ճամբեն։ Մի կտուրից չտապ իջնելիս նա վոտքը դրեց չան բնի վրա և չունը կլանչոցով դուրս թռավ բնից։ Աթանեսը թափը չպահեց և ամբողջ մարմնով ընկավ չան վրա... Շունը գազազեց, կատաղեց և նրա կլանչը խավարը ծվատելով տարածվեց կտուրների վրա և դրանցից ել դենը, հանդչելով սարի փեշերի ու բլուրների մոտ։ Մյուս շներն արձագանքեցին և ելի չուտ կտրեցին ձայները։ Նույն պահին տանը Հարութը լսեց շների կլանչը և ահ զգաց սրտում։ Մադին ու Վարդազարը դեռ տուն չեյին հասել։ Նրանք ել նույն պահին իրենց տեղում ահով կանգ առան, լարեցին ականջները, սակայն մարդկային վոչ մի ձայն չլսվեց։

Աթանեսը լեղապատառ դեպի տուն ծլվեց։

Զորաշենի այդ ուշ գիշերում չորս հոգի հանվեցին և թախտի վրա չորեքթաթ սողացին, մտան վերմակի տակ, իրենց կանանց ծոցը։ Սակայն 4 բարձի վրայի 4 միտք դեռ յերկար ժամանակ անքուն մնացին։ Նրանք վոստայն եյին հյուսում կոլխոզը ցանցելու համար։

Գիշերը կիսվել եր։

***

Գարնան աշխատանքի թեժ ժամանակ Զորաշենի կոլխոզը մի տրակտոր ստացավ՝ շարքացանը հետը:

Եղ որը Զորաշենի և նրա կոլխոզի համար նշանակավոր օր էր: Ցերը տրակտորն ու շարքացանը գյուղ մտան, զուռնա-դհոլը նվագում էր գյուղամիջում: Կամսոմոլն ու մյուս կազմակերպությունները վոտք էին յելել: Տներում ծեր, հաս ու յերեխա չէր մնացել, բոլորը գյուղամեջ էին հավաքվել: Տրակտորը ճեղքելով խռնված ժողովրդի շարքերը, բաշին փակցրած կարմիր դրոշը ֆռֆռացնելով մտավ հրապարակ: Նրա ձենը գյուղն էր ընկել: Մեկը պտտում էր շարքացանի լծակը և ցորենը հատիկ-հատիկ ցած էր թափվում: Շարքացանի դուրալի չըխկչըխկոցը խառնվել էր տրակտորի ձենին:

Գյուղը դրմբում էր:

***

Մի քանի որում տրակտորը վարեց կոլխոզի բոլոր հողերը: Հալա սարի փեշում էլ 2 որավար խամ հող վարեց գարի ցանելու համար:

Կոլխոզի վարչությունը վորոշեց՝ չքավորների ու միջակ գյուղացիների հողերը վարել եժան վարձով: Տրակտորն որը մոտ մի տնտեսության հող էր վարում, իսկ շարքացանը կարմիր ցորենը շաղ տալով գնում էր նրա յետեվից:

Տրակտորը մի ամիս անհատական տնտեսությունների հողերը վարելուց հետո անցավ նոր պատրաստած սղոցարանը: Առաջին յերկու որը կոլխոզի նոր արհեստանոցի համար տախտակ խզարեց: Գյուղացիները դեռ-



բաններ էին կրում սղոցարանի մոտ, նույնպես խզարելու համար:

Կոլխոզը պատրաստվում էր խզարի աշխատանքները վերջացնելուց հետո ալրաղաց սարքել տրակտորի ուժով:

Եղ որերից ձորաշենցիների բերանի խոսքը կոլխոզն էր, նրա «հրաշքները»:

Շատ շատերը դիմում տվին կոլխոզին, իրենց էլ ընդունելու համար: Բարսեղը տեսնում էր այդ բոլորը և հուզմունքը կրծում էր նրա սիրտը, վոր շատերը վաղուց են կոլխոզի անդամ, շատերն էլ նոր են ընդունվում, իսկ ինքը դուրս է կոլխոզից: Եղ որերին ակտիվ կոլխոզնիկներից մեկը Բարսեղին յետևը գցած տարավ և ցույց տվեց կոլխոզի գոմը, գրասենյակը, պարտեզը, սղոցարանը, մանկամսուրը և կոլխոզնիկների տները, նրանց նիստ ու կացում կատարված փոփոխությունները:

Բարսեղը մի կողմ դրեց համառությունը, գրասենյակում մի վճռական շարժումով մոտեցավ իրեն ուղեկցող կոլխոզնիկին և խնդրեց.

— Մի նեղություն քաշի, ինձ համար դիմում գրի, յես էլ եմ եսորվանից կոլխոզ մտնում:

«Դիմումը» գրվեց և Բարսեղը կոթնելով սեղանի վրա, անվարժ ձեռագրով ստորագրեց իր ազգանունը:

Մի շարք կոլխոզնիկներ զանազան գործերով գրասենյակ էին յեկել: Նրանք լսեցին Բարսեղի ցանկության մասին և շատ ուրախացան, վոր գյուղական աշխատանքներից իրեն հեռու պահած Բարսեղն եսոր կոլխոզ է մտնում:

— Ապրես, Բարսեղ, դու յել ինձ նման քո խերն ու շառը հասկացար,— բարձր ձայնով խոսեց նրա հին

սանահեր Մարտիրոսը և մոտեցավ Բարսեղին, ուրախացած բռնեց ձեռքը, պինդ թափահարեց,— չէյի կարծում... Լավ ա, դու յել յեկար:

Նախագահն ել եր դրասենյակում. նա յել ժպիտով մոտեցավ Բարսեղին, բռնեց ձեռքը:

— Սրանից հետո քո անասուններն ել Թաթոսի արտը չեն ընկնիլ, քեզ ել ձրի չենք աշխատեցնիլ: Հիմա բոլորինս միատեղ ա, իմ ու քոն չկա...

— Ընհենց ել հարկավոր ա,— վրա բերեց Բարսեղը:

— Տղերք,— քիչ հետո բարձր կանչեց նախագահը, ասես ինչ-վոր հիշելով,—մի հլա Թաթոսին կանչեցեք, Թաթոսին, հաշտեցնենք սրանց...,

Շատերն եյին իմանում Թաթոսի և Բարսեղի լարված հարաբերության և նրանց արտի, եշի ու ծեծի հայտնի պատմության մասին: Ցերկու հոգի դուրս թռան և պատշգամբից գրեթե գրկած ներս բերին Թաթոսին, վորտեղ նա զրույց եր անում կոլխոզնիկների և մի շարք գյուղացիների հետ:

— Պռոշտի՛... թող պռոշտի անե՛ն,— բղավեց մեկը ու նրան հետևեցին բոլորը.

— Պռոշտի՛... պռոշտի՛...

Ցերը Թաթոսն աղմուկի միջից լսեց Բարսեղի վրճռական վորոշման մասին ու նրան տեսավ ուրախությունից շփոթված դրության մեջ, ինքն ել ընդհանուրի աղղեցության տակ մոտեցավ նրան, Բարսեղին: Բարսեղն ուրախ դեմքով առաջ յեկավ. Թաթոսն եդ տեսնելով ել չդիմացավ, վրա ընկավ Բարսեղին, փաթաթվեց ու յերկուսով պռոշտի արին: Ամենքը հանդիսացան— պռոշտին կատարվել եր:



— Ա՛յ թե քեզ վոնց կոլխոզնիկ կկնքենք,— ուրախ վրա բերեց սանահեր Մարտիրոսը, մի ձեռքը նրա թևի տակով անցկացնելով:

Ցերկու հարևանի հաշտության լուրը «դշի թևի հետ» հասավ Աստանեթին ու Վարդիշաղին:

***

Ստեփանը մի լավ ստուգել եր նոր կոլխոզնիկների հողերը և կոլխոզի ժողովում զեկուցել, թե վոր հողում ինչ պետք է ցանել եդ գարնան: Եդ հիման վրա կոլխոզի գարնան ցանքի պլանում կետ մտցվեց, վոր «գյուղի հյուսիսային կողմում գտնվող հողերը» (ձորի գլխից մինչև Աբենանց բախչեն) պարսպել և կարտոֆիլ ցանել:

Եդ մասում եր ընկնում նաև ճանապարհի հետ մինչև գյուղի ծայրը յեկող, Բարսեղի նախկին հողը, վորն արդեն միացված եր կոլխոզի հողերին:

***

Հենց յերկու որ հետո կոլխոզի աշխատող ձեռքերի մեծ մասը և լծկանն զբաղվեց եդ հողամասը պարսպելու աշխատանքով: Բարսեղն ու Թաթոսը քրտնամխած լծվել եյին եդ գործին:

Անտառից սայլերի շարքերը տասնյակ ցցեր բերին, վորոնք յերեք որից հետո արդեն զինվորների նման շարքի եյին կանգնել և շրջապատել եյին կարտոֆիլի ցանքի համար վարած հողամասը: Ցցերը միմյանց միացված եյին փշալարերի հինգ շարքով:

Զորս որում ել ամբողջ կոլխոզնիկներով սերմ կարտոֆիլը ցանեցին: Եդ գործում մանր յերեխաները շատ ոգնեցին: Նրանք կարտոֆիլը «գցում» եյին:

***

Նախկին հարևանների մտերիմ կապերը նորից վերականգնվեցին։ Նրանք քանդեցին իրենց տների սահմանում փայտերից սարքած պատնեշը։

— Ամոթ ա մեզ խռով մնալը,— ասում եր Թաթոսը,— յերեխա չենք կամ թշնամի։

— Լավ, ինչ յեղել ա, յեղել,— քաղցր ձայնով նրան ընդհատեց Բարսեղը,— սրանից հետո լավ կլինենք, մի տան նման։

Սանեթը և Վարդիշաղը միշտ իրար մոտ եյին գնում-գալիս ու սիրով զրույց անում յերկար։

Նրանց յերեխաներն եվ իրավունք ստացան միշտ իրար հետ լինելու և ամբողջ որը խաղում եյին կալերում, կարոտներն առնում։

Գյուղի ծայրին կոլխոզի հողամասում կարտոֆիլի խուճուճ թփերը յերկու թզաչափ բոյ եյին քաշել։ Վերջին որերին մարմանդ անձրև եր յեկել, թփերը կատաղել եյին, բարձրացել։

Քամին խաղում եր զանգուր չարքերի հետ, գուրգուրում նրանց, ինչպես սիրող մայրն իր մանկան։

Թաթոսն ու Բարսեղը զրուցելով գնում եյին նոր ձգած ցանկապատի մոտով։ Գնում եյին տեսնելու կոլխոզի կարտոֆիլի հողերը։

Բարսեղն աչքերը կկոցելով նայում եր կարտոֆիլի թփերի ընդարձակ տարածությանը ու դժվարանում եր հավատալ, վոր իր նախկին տրորված ու չոր հողում այդպես փարթամորեն բարձրացել են կարտոֆիլի թփերը։ Նայում եր ու աչքերին չեր հավատում։ Ո՞ւր եր գնացել իր արտի միջով ձգվող կածանը։ Չկար նա, չկար և իր արտը— չկային հասկերը։ Հատիկի



փոխարեն այդ դարնան կարտոֆիլը մտավ հողի կուրծքը։ Այն ո՞վ զրույց արավ հողի հետ, հասկացավ նրա լեզուն։ Հասկացավ, վոր հատիկի փոխարեն կարտոֆիլ պիտի թաղել այդ հողամասի կրծքում։

— Հա՛, Ստեփանն եր,— հիշեց Թաթոսը,— մեր Ստեփանը։ Գյուղատնտեսը։

— Տեսնո՞ւմ ես, Թաթոս,— ձեռքը մեկնեց Բարսեղը, Թաթոսն սթափվեց ձայնից,— թփերն ինչքան են բարձրացել, փարթամացել։

— Կոլխոզի հունարն է՛,— ծոր տվեց Թաթոսը։

— Հնենց եվ վոր։ Մեր որումը մեր հողերն ու անասունները հնենց չենք պահել, բեջարել, վոնց վոր եռ տարի։

— Իմ առաջվա ես հողն ինչ ա,—Թաթոսը մատով ցույց տվեց ճանապարհի վերեվի կողմը,—15 տարի յես դրանից ոգուտ չստացա։ Համա կոլխոզի ուժով չափարեցինք ու լավ բերք եվ կվերցնենք։

— Մենակ դու չես։ Ցես իմ հողերից չա՞տ ոգուտ են ստացել։ Նմանապես մեկ եվ գեղացիները։

— Հա, Բարսեղ,-հանկարծ կատակով խոսեց Թաթոսը,-խեղճ եշդ հիմա ի՞նչ պտի անի, հողերը չափարել ենք։ Եվ չի կարող արտ ուտել։

— Ցեկող ամսից կոլխոզն եշի նախիր ա ունենալու։ Մեր մի ականջանուն եվ նախիրը կանենք, կերթա հանդերումը քեֆ կանի։

— Հա՛, իսկապես, քո եշի ականջը։—քրթմնջաց Թաթոսը,—վոնց կտրեցի է՛,-ծոր տվեց ու ծիծաղեց։

— Ցես եվ քեզ լավ քոթակեցի, կողքերդ ջարդեցի,-նույնպես ծիծաղելով վրա բերեց Բարսեղը ու յերկու ձեռքով Թաթոսի կողերը տնտղեց։ Հետո մի թեվը գըցեց թիկունքովը։

— Են որերն անց են կենում,—լրջացավ Թաթոսը,— հիմա ուրիշ որեր և ուրիշ կյանք ենք բերում: Մի ընտանիք ենք դառնում:

— Սոցիալիստական ընտանիք,—վոգեվորվեց Բարսեղը:

— Կաց մի թուփ քաշեմ, հլա տեսնեմ յերեսպարզ ա՞:

Ու Թաթոսը կռացավ, յերկաթալարի արանքով ներս մտավ: Նա յերկու ձեռքով բռնեց կանաչ թփերից մեկը, քաշեց և ժպիտը դեմքին՝ թուփը պարզեց Բարսեղին:

— Պա՛հ, քու տունը չինվի· արա եղ մի թուփ ա՞,— զարմանքից հոնքերը ձգեց Բարսեղը:

— Բա չտեսա՞ր:

— Վոր հասնեն, մեծանան, յերեվի ամեն մի թուփը կես փութ բերք կտա:

— Կարա՞ չտա՞: Եվ գյուղում աղբ չթողեցինք, ես հողերն ածեցինք, բոլոր աշխատանքները Ստեփանի խորհուրդներով տարանք:

Ու յերկու մտերիմ հարեվանները յերջանկության ժպիտով նայեցին քաշած թփի վրայի մանր ու գառան դմակի պես սպիտակ ու մաքուր կարտոֆիլներին: Ասես իրենց հույսը, իրենց քրտինքն ու բախտավորությունն եյին տեսնում նրանցում:

— Զե, Բարսեղ,— ծանր խոսեց Թաթոսը,— կոլխոզը «պլուս հանեց»:

— «Պլուս հանեց», բա՛:

— Հլա ես տարի բերքը տուն հավաքենք, են վախտը մեր գյուղի թշնամիների աչքը կհանենք: Թե վոր մի տարուց հետո սաղ գեղը կոլխոզի մեջ չմտնի, բաս յես Թաթոսը չեմ լինիլ:



— Ուրիշ ի՞նչ պետք ա անեն: Ո՞վ իր աչքի փուչը կուզի:

Ու Թաթոսն ու Բարսեղը միասին վերադարձան: Թաթոսը չուտ-չուտ ձեռքում բռնած թփին իր նայում:

— Տանեմ Ասանեթիս ցույց տամ: Տեսնի, ուրախանա:

Մոտեցան իրենց տներին:

Ցետեվում կարտոֆիլի կանաչ ու խուճուճ թփերն եյին որորվում, իսկ նրանցից եվ դենը, հեռվում, սարից փչող հովը թիավարում իր չեկ արտերի ծիծանքը:

Արեվը խաղում իր զանգուր կանաչների և ծաղրացած հասկերի հետ:

Ամառը չոգեվ իր: Ցեվ արեվն իր չոգեվ ու հասել: Հասել իր մրդի պես ու իր չոգերով քաղցրություն իր սրսկում հողի յերակներում:

Բերքն ամեն տեղ կախվել իր հողի սեվ չրթունքներից:

Հողը քրտնել իր բերքով:

***

Գիշեր իր, խավար գիշեր: Ածուխի չափ մուգ, ածուխի չափ սեվ:

Գիշերն ուղիղ կիսվել իր, վոր մի հարայ բարձրացավ Զորաշենում:

Սպիտակ հագնված մարդիկ եյին տներից դուրս գալիս, դռանն ականջները լարում, բայց պարզ վոչինչ չեյին լսում: Միայն ինչ-վոր աղմուկ և բարձր խոսակցություններ եյին լսվում զանազան կողմերից:

Մի կին տան չեմքում բռնում իր ամուսնու փեշը և չեր թողնում գնա:

— Մարդասպանություն կլինի, դուրս մի գնալ:

Բայց ներքին հետաքրքրությունը մարդուն դուրս էր բերում մինչև տան դուռը կամ բակը:

Հանկարծ մի բարձր ձայն լսվեց մի կտուրից.

— Խա՛լխ... Պաժառ ա՛... Կոլխոզի դոմը պաժառ ա ընկե՛լ է՛... Բոմա՛՝դ... Բոմա՛՝դ:

Ձայնը գիշերվա խավարի միջով փռվեց Զորաշենի կտուրների վրա և դյուղը լսեց ահավոր վոճիրի մասին, և ամենքը ցնցվեցին և նրանց սրտում խոսեց վրեժը դավադիր Թշնամու դեմ... Նրանք ամեն կողմից, առանց փայտի ու քարի նայելու, ճեպով վազեցին դեպի կոլխոզի դոմը:

Ամբողջ անասունը, առանց վնասի, դուրս եյին բերել դոմից:

Բայց վոտներով ու սպիտակ հագնված մարդիկ դուլլերով ու յերկու տակառով ջուր եյին կրում դոմի ներսը: Մի քանի յերիտասարդ նետվել եյին դոմը և մաքառում եյին ծավալվող կրակի դեմ: Մյուսները նրանց ոգնում, ջուր եյին հասցնում:

Բազմաթիվ աչքեր պսպղում եյին դոմի չուրջը և նրանց ձեռքերը ճրագներ եյին պարզել դյուխներից վեր: Ճրագների թույլ և դեղին լույսերը կիսով չափ պատռում եյին դոմի չրջապատի խավարը:

Հրդեհը ներսից եր սկսվել: Դոմի կտուրից սև ծուխ եր բարձրանում դանդաղ և լուծվում խավարում: Ցերեմն ներսից, ծխի հետ կրակի լեզուներ եյին դուրս թռչում և լիզում խավարը:

Շատերն եյին ցանկանում ներս գնալ դոմը, ոգնել, բայց չեյին թողնում:

— Թե կարաք, ջուր հասցրեք,-կարճ ասում եյին նրանց:



Դեռ հավաքվում եյին գյուղացիները, կոլխոզնիկները:

Կոլխոզի նախագահ Վաչագանը տղերքանցից մեկին ուղարկեց գյուղի ծայրը, Թաթոսի և Բարսեղի մոտ, նրանց յեկա տեղեկացնելու պատահած դեպքի մասին:

Թաթոսն ու Բարսեղը իսկույն տներից դուրս թռան և բոցկլտող աչքերով միմյանց հանդիպեցին:

— Թշնամու արած ա,-սառը դուրս թռավ Թաթոսի տատամների արանքից:

— Հարութի ու մեկելների սարքած բանն ա: Ցեսդիտեմ, նրանք դեռ վաղուց եյին ուզում կոլխոզի գբլխին ոյին խաղալ: Հիմա գնանք, վաղը նրանք մեր բռի մեջ կլինեն:

Ցեվ յերկուսով գիշերային խավարի միջով թռան դեպի գյուղամեջ:

***

Շողշողում եր արեվը, ամռան արեվը:

Հեռու սարերից հով եր հոսում կոլխոզի դաշտերին: Այնտեղ արտերը վեսվեսում եյին ու ծփում քամուց: Ծփծփում եյին արտերը և ալիքվում հասկերը: Նրանք հասել եյին, դեղնել և ասես հաղար ձեռք վոսկի յեր չաղ տվել արտերի վրա:

Արեվն ուժ եր տալիս հողին, հասկին, հունդին: Ու հասկը հասակ եր առնում, հասունանում ամեն մի րոպե:

Հեռու սարի ստորոտից մինչև գյուղի ծայրը մի մեծ արտ եր—կոլխոզի ընդարձակ արտը:

Տրակտորի փայլուն խոփը ճեղքել եր սահմանների ամուր ու նեղ կուրծքը և միացրել բոլոր արտերը:

Ցերբ արեվը թիկն եր տալի ժոտիկ լեռան ու�, նրա շողերը թուլանալով կամաց բարձրանում եյին դիմացի լեռնաշղթայի վրա։

Ցերեկոն սաստկացնում եր սարերից փչող սառ քամին և թափ եր առնում հասկերի խաղը և ալիքները դլում եյին իրենց մեղմիկ յերդը։

Ցեվ վոչ մի տեղ, վոչ մի բոպե չեր դադարում նրանց յերդը։ Ցերդն ել չեր հեծկլտում և ել սահման չկար նրանց ընդհատող։ Ցերդն առաջ եր թեվում, մինչև դյուղի ծայրը, և դիպչում եր յերկհարկանի շենքի ցեմենտած պատերին, ուր հասկերն ել չարդված չեյին ու արտրված։

Կոլխոզի յերկհարկանի շենքից դենն եր գյուղը։ Նրանով եր սկսվում Զորաշենը։ Ուրիշ վոչ մի կառույց չեր յերևվում, վոր բարձր լիներ ցեմենտապատ շենքի առանիցից։

Նոր շենքի բնակիչներն զգում եյին իրենց քրտինքի ուժը։ Նրանք լսում եյին արտերի յերդը։



ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

# ԱՂՋԻ ՋԱՆ

Աղջի ջա՛ն, խաղով ո՞ւր կերթաս,
Աչքդ սև խաղող, ո՞ւր կերթաս,
Կոլխոզի արտերի միջով
Առտրվան շաղով ո՞ւր կերթաս։
—Արևշաղ գարունն ե կանչում,
Արտերում առուն ե կանչում,
Ջա՛ն տրդա, յեկ վարի գնանք,
Արևը վառ՛ում ե, կանչո՛ւմ։
Աղջի ջա՛ն, կըշտանց ո՞ւր կերթաս,
Թեվրդ վեր քըշտած ո՞ւր կերթաս,
Տրակտոր-մաշինի վրա
Առտրվան նըստած ո՞ւր կերթաս։
—Տրակտոր մի յարի կերթամ,
Կանչում ե թե արի՛, կերթամ,
Ջա՛ն տրդա, կոլխոզնիկ եմ յես,
Մեր արտերը վարի կերթամ։
Աղջի ջա՛ն, խրնդուն ո՞ւր կերթաս,
Քայլվածքով թրնդուն ո՞ւր կերթաս,
Կոլխոզի արտերի միջով
Իրիկվանը դուն ո՞ւր կերթաս։
—Մաշինով պարեցի, կերթամ,
Մեր արտը վարեցի, կերթամ,
Ջա՛ն տրդա, կոլխոզնիկ եմ յես,
Քո սիրտը վառեցի, կերթամ։

ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

# ՄԱՐՈՆ ՈՒ ՍԱՐՈՆ

ՍԱՐՈ

—Գարուն եկավ, Մարո՛ ջան,
Արևն ելավ վառուն,
Քըչքըչում են, յարո՛ ջան,
Սառն աղբյուրներն, առուն:
Մեր յերկիրն ել, Մարո՛ ջան,
Վոնց վոր ծաղկած գարուն.
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,
Զա՞ն, սավետի յերկիր:

ՄԱՐՈ

—Արևն ելավ, Սարո՛ ջան,
Պաչեց դոշը սարի,
Տըրակտորդ, յարո՛ ջան,
Քըշիր, դեսը արի՛,
Թեվըդ քըշտիր, Սարո՛ ջան,
Մեր արտերը վարի.
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,
Զա՞ն, սավետի յերկիր:

ՍԱՐՈ

—Մեր գեղումը, Մարո՛ ջան,
Կին-բաժին ես դառել,
Սադ կանանցը, յարո՛ ջան,
Ժողովի յես տարել:
Հին ադաթը, Մարո՛ ջան,
Վոտնատակ ես արել.
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,
Զա՞ն, սավետի յերկիր:

ՄԱՐՈ

—Գեղխորհրդում, Սարո՛ ջան,
Նըստել ես դու ժողով,
Թուխ յերեսըդ, յարո՛ ջան,
Լուսաբացի շողով:
Կուլակները, Սարո՛ ջան,
Բըռնըվել են դողով.
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,
Զա՞ն, սավետի յերկիր:

ՍԱՐՈ

—Զահել ես դու, Մարո՛ ջան,
Վոնց վոր կարմիր խընձոր,
Աշխատում ես, յարո՛ ջան,
Արտումը վոնց հընձվոր.
Դու մեր գեղին, Մարո՛ ջան,
Արեվի շող վոնց վոր.
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,
Զա՞ն, սավետի յերկիր:

Ն. ԶՍՐՅԱՆ

# ՔԱՌՅԱԿՆԵՐ

1.

Հայաստանի համար ասավ,
Լենինը պարզ ու վառ ասավ,
Խորհրդային իշխանություն,
Զրանցքներ անհամար—ասավ:

Ես մեծ խոսքը Լենինն ասավ,
Բանվոր ռանչպարներին ասավ,
«Խաղաղություն խրճիթներին,
Կռիվ պալատներին» ասավ:

Ընկեր Լենինն ասաց՝ գնանք,
Զգուշ և աչքաբաց գնանք,
Բանվորներ և գյուղացիներ,
Մեծ միություն կապած գնանք:

Գեղը կանգնի՝ գերան կոտրի,
Զար թշնամու բերան կոտրի,
Ցեթե կանգնի դասակարգը,
Ժեռն ապառաժ լեռան-կոտրի:

2.

Հերիք է ապլով գնանք,
Ցերտերի նաղլով գնանք,
Ցեկեք զիռուրյան քայլով,
Ցերկաթի փայլով գնանք:
Լենինյան քայլով գնանք,
Արեվի վայլով գնանք,



Տրակտորը գյուղ յեկավ,
Հաստատ անյերկյուղ յեկավ,
Ճարպակալած կուլակին
Մահացու յերկյուղ յեկավ:
Կոլեկտիվ ձեռքով յեկավ,
Ցերկաթե յերգով յեկավ:

3.

Զտած սերմը—բերքով եր,
Բոլշեվիկյան խելքով եր,
Սրտը վոսկի յե կապել,
Մեր կոլլեկտիվ ձեռքով եր:
Զտած սերմը բերքով եր,
Նոր խելքով ու ձեռքով եր:

Լենինի մեծ դարն է սա,
Տրակտորի վարն է սա,
Ցերկաթավոր, ելեկտրիկ,
Լուսավոր աշխարհն է սա:
Լենինական դարն է սա,
Սոցիալիզմի սարն է սա:

Ի՞նչ արմատ ես—հողում չես,
Ի՞նչ կաթիլ ես—ծովում չես,
Վո՞նց ես, ախար, կոմմունիստ,
Վոր մեր կոլլեկտիվում չես:
Ել, հողում չես, ծովում չես,
Կյանքում, կոլլեկտիվում չես:

Կաթիլ-կաթիլ ծով կելի,
Կոլլեկտիվն ուժով կելի,
Կոլլեկտիվում մարդը լեն
Սրտով ու սիրով կելի:
Ծով կելի, ուժով կելի,
Մարդը վառ սիրով կելի:

4.

Գարնանացանն ամբողջ անենք,
Գարնան ամպ ու զամպով անենք,
Հարվածային մրցությունով,
Բայշեվիկյան տեմպով ցանենք:
Ամպ ել լինի, ամպով ցանենք,
Բայլշեվիկյան տեմպով ցանենք:

Ցես յերգ ունեմ յերգի նման,
Տրակտորի հեվքի նման,
Ցանած արտի վրա բացված
Կարմիր արեվելքի նման:
Աշնան առատ բերքի նման,
Համարձակ վերելքի նման:

Սերդ սրտիս վերքի միջին,
Շարքացանը հերկի միջին,
Կոլխոզ աղջիկ, հանդ ես գնում,
Իմ նորաբաց յերգի միջին:
Կոլխոզ աղջիկ յերգի միջին,
Շարքացանը հերկի միջին:

Շարքացանով ցանք եմ արել,
Նոր կենցաղ ու կյանք եմ արել,
Կոլլեկտիվում հարվածային,
Հալալ աշխատանք եմ արել:
Ցանք եմ արել, կյանք եմ արել,
Կոլխոզ աշխատանք եմ արել:



5.

Հնձվորները սեվին տալով,
Գերանդիքն արեվին տալով,
Կոլխոզ-արտում հնձի յելան՝
Ուժ ու յեռանդ թեվին տալով:
Հունձ եմ անում հեվին տալով,
Խուրձ խրձի հետեվին տալով:

Հունձ արա, հեյ, արագ հնձի,
Հարվածային կրակ՝ հնձի,
Կոլխոզ ընկեր, քրտնել ես,
Դուշմանին հակառակ՝ հնձի:
Կոլխոզ ընկեր, արագ հնձի,
Կուլակին հակառակ հնձի:

Հունձն արեվի շողով արինք,
Լուսնյակի տակ ժողով արինք,
Բայլշեվյան բերքահավաքն
Ես տարի ապահով արինք:
Հունձը շաղով, շոգով արինք,
Հարվածային հոգով արինք:

6.

Ընկեր Ստալին սամթով տարավ,
Լենինի ավանդով տարավ,
Տրակտորի ճամբեն նախշուն
Մեր կոլլեկտիվ հանդով տարավ:
Մեզ Լենինի ճամբով տարավ,
Բայլշեվիկյան տեմպով տարավ:

Կուլակները դեզ են վառել,
Սեվ դուշմանի պես են վառել,
Կոլխոզ ընկեր, համբերո՞ւմ ես,
Մեր ապրուստը—մեզ են վառել:
Դեզ են վառել, մեզ են վառել,
Խորամանկ պես-պես են վառել:

Վոչ մի ձեռ թող տուն չմնա,
Վոչ մի թիվ թղթում չմնա,
Թող վոչ մի հասկ, վոչ մի հատիկ
Ես տարի հանդում չմնա:
Կոլխոզ ընկեր, տուն չմնաս,
Հունձի արտում հուն չնմաս:

7

Պիոներները նորից
Արտ են մաքրում քարերից,
Ջան, նոր կյանքի սերմիկներ,
Կյանքը մաքրեք չարերից:

Կարմիր բանակից ընկեր,
Կռվող, գիտակից ընկեր,
Մեր կոլեկտիվ կենցաղի
Զինվոր, զինակից ընկեր:

Թող նոռիկները նոռան,
Մուր նեղքերում նոնռան,
Արեվն արդեն լուսավոր,
Ճառագել է մեր դռան:



ԱԼԱՋԱՆ, Վ. ՆՈՐԵՆՑ, Ս. ՏՍՐՈՆՑԻ

# ՔԱՌՅԱԿՆԵՐ ԲԱՄԲԱԿԱՑԱՆԻՆ

1.

Աչը՝ ջուր է ածում կուլակի ջաղացին,
«Ձախը» փախցնում է միջակ գեղացուն,
Լենինյան նամբից շեղված այդ յերկուսը—
Կարագ են քսում թշնամու հացին:

Պինդ հարված տանք աջի լեզվին,
Ձակերտավոր ձախի լեզվին,
Կուսգծի նիշտ կիրառումն է
Հասցնում մեզ սոցիալիզմին:

Թե աշխույժ գյուղխորհուրդ է,
Կուլակի բանը բուրդ է.
Կոլխոզին ինչքան բամբակ,
Կուլակին ենքան ցուրտ է:

Գյուղխորհուրդը ծուլացել է,
Աշխատանքը թուլացել է.
Բամբակացան որում քնեց,
Եղ քնով էլ մնացել է:

Խարդախ ագվես կուլակը
Քեզ կըզգի թալակը,
Հեյթի արի, հորոխպեր,
Ցորնի չտաս բամբակը:

Կուլակը դավ կլարի,
Վոր ցանք չանես այս տարի,
Կամ թե բամբակի տեղը
Ցորեն ցանես ու գարի:

Կուլակը քո ականջին
Փսփսում է՝ «մի ցանիր»,
Բայց դու լսիր մեր կանչին,
Ցանիր, աչքը հանիր:

Դաշնակը ի՞նչ ա ուզում,
Բամբակը քիչ ա ուզում,
Ալան, թալան, կոտորած,
Արյունի լիճ ա ուզում:

Տերտերին մի հավատաք, կրոնը թույն է,
Ցեկեղեցին թշնամի, կուլակի բույն է,
Ցեկեղեցուն, տերտերին թե նամբից հանենք—
Կուլակի վրա տարած մեծ հաղթություն է:

Բամբակի հունդ հողը դրիք,
Մատաղ յես ձեր կտրող թրին,
Եդ մի ձեռք է ծանր իջած
Խատիսովի ցիլինդրերին:

Մեր բամբակի փափուկ քուլեն,
Մեր թվանքի կըպուկ լուլեն,
Դարձել են խոզ բուրժույների
Մեջքը կոտրող խաթաբալեն:



2.

Հնգամյակի յերրորդ տարին՝
Անց գնդի սաղ ռանչպարին,
Կոլլեկտիվով բամբակ ցանենք,
Թող մեր վոտքը չառնի քարին:

Հիմա գարկի հերթը մերն է,
Տրակտորների յերթը մերն է,
Հնգամյակը՝ չորս տարում—
Սոցիալիզմի բերդը մերն է:

Յերրորդ վճռական տարին
Բոլոր ուժերդ լարի,
Հնգամյակը չորս տարում՝
Հաղթանակը պայքարի:

Մենք խանդավառ կոմսոմոլիստ
Թե հայ, թե թուրք, թե ասորի,
Բամբակի արտ գրոհ գնանք
Առավոտյան ու կեսորին:

Ռիզա, Զաքար, Ակոբ, Ադո,
Բամբակացան ենտուզիաստներ,
Հարվածային բրիգադով
Առաջ գնանք, մեզ չը հասնեն:

Կոլլեկտիվով անենք տոն,
Բամբակ ցանենք, բոլ ցանենք,
Հարվածային յեռանդով
Ամբողջ դաշտ ու չոլ ցանենք:

Պլանները թեզ անենք,
Բանվորների պես անենք,
Լենինական տեքստիլում—
Բամբակների դեզ անենք:

Պլանները լրիվ անենք,
Վնռական մի կռիվ անենք,
Կուլակային դասակարգին
Քոքահան ու ցրիվ անենք:

Տրակտորը ակոս արավ,
Ջտեսնված տոկոս արավ,
Կուլակային դասակարգին՝
Գերեզման ու մի փոս արավ:

Արեվն առել ա սարին,
Կուլակի վոտքը քարին,
Ապրի մեր բայշեվիկյան
Բամբակացանի տարին:

Բամբակը հավաքել ենք, դեզի նման ե,
Յար ջան, բամբակի քուլեն մեզի նման ե,
Ջանքին ով աշխատի՝ տրակտոր ե, ջան,
Ջաշխատողը պառաված յեզի նման ե:

Առտվան շաղով հողը թաց ե,
Բամբակը մեզ հալալ հաց ե.
Բամբակացան կոմսոմոլ յար,
Սիրուդ համար սիրտս բաց ե:



3.

Ես մեր դարում, գեղացիք, անհատն ի՞նչ անի,
Թե վոր գործիք չունենա՝ քարհատն ի՞նչ անի,
Կոլեկտիվն ե անհատին քնելուց հանում.
Թե չե մի կողմ վեր ընկած քնատն ի՞նչ անի:

Ինչքան մենակ ցանես՝
Լծած յեզ ու մոզի,
Ելի անզոր մի բան ես,
Չես հասնի կոլխոզին:

Պարարտ ե գարնան հողը,
Կոլեկտիվն ե ցանողը,
Կուլակը վոր տեսնում ե՝
Բռնում ե ահ ու դողը:

Սկսվել ե ձընհալը,
Կոլեկտիվ վար գնալը,
Ինչքան քեզ հետ ե գցում
Կոլխոզից դուրս մնալը:

Բամբակացանի որ ե.
Ցելենք դաշտը յերքանք,
Բամբակը մեզ շոր ե,
Իսկ կուլակին պատանք:

Տրակտորի ակոսը
Սրբեց մուրճն ու բորբոսը,
Բարձրանում ե անընդհատ—
Կոլեկտիվի տոկոսը:

Այ ձեզ մատաղ, վաղո, Սոդո,
Մեր արտելի ախպեր տղերք,
Բամբակ ցանենք ամբողջ հողով
Ու դուշմանին եսպես նեղենք:

Միջակ ախպեր Բալաբեկ,
Տղիդ ուսման ես ճամբել,
Ի՞նչ ես մենակ փորփորում,
Կոլլեկտիվն է քո ճամբեն:

Ձրեվը մեր է մտնում,
Բամբակը տեր է գտնում,
Մենք ենք բամբակի տերը
Գործարանում ու արտում:

4.

Ես ցանքը ինչքան շատ է,
Կռիվ ու բարիկադ է,
Կոլխոզին քոմակ յեկավ,
Բանվորի բրիգադ է:

Ցեկել ես գործիքներով,
Բրիգա՛դ, բարով խերով,
Մենք ել քաղաք ենք գալու
Բամբակի հազար բեռով:

Գործարանի բրիգադից նամակ ստացանք,
Մենք խոր պինդ, յերկաթի քոմակ ստացանք:
Բանվոր տղեն բամբակի արտերը ցելեց,
Կուլակների սիրտ նեղքող դանակ ստացանք:

Կոլխոզի ալ ձին նստա,
Քաղաք մտա յես վստահ,
Տրակտորով յետ յեկա,
Կուլակը թող վընգստա:



Տրակտորը բերքի բախտ է,
Թշնամուն ել մահու լախտ է,
Ի՞նչ եք նստել, այ ընկերներ,
Բամբակացան վարի վախտ է:

Տրակտորը արտը յեկավ,
Կոլլեկտիվի գարդը յեկավ,
Կուլա՛կ, տերտեր, դաշնակցական,
Ձեր պատիժն ու դարդը յեկավ:

Գործարանը տեքստիլ
Ջիթ ու շոր է հազրում,
Այ կոլխոզնիկ, մի նստի,
Դու յել բամբակ հասցրու:

«Մանկալը» թե կարդում ես,
Քո ճամբան ել հարթում ես,
«Մանկալն» ընկերդ է, կոլխոզ,
Վոր կուլակին ջարդում ես:

Քեզ տրակտոր ու ամառ, ա՛ըտ
Արծաթ-կոկոն ու դալար, ա՛ըտ,
Ծափ տո՛ւր, ծփա, շորոր արի՛,
Բամբակավոր ու վարար արտ:

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

# ՍԵՐՈԲԻ ԱՐՏԸ

Սերոբը թեև կոլեկտիվ չմտավ, բայց մյուս անհատականների պես չբաշվեց ել մի կողմ։

Ո՞վ է իմանում, դուցե կոլեկտիվը խելացի բան է։

Մի խոսքով՝ կապը չկտրեց կոլեկտիվի հետ։ Գնում գալիս եր, մասնակցում նրանց զրույցներին, խորհրդակցություններին ներկա լինում։

Այնպես վոր Արշակը, Ալեքն ու Գարսեվանը իրար մեջ փսփսում եյին.

—Սա յել նրանցից ա։

—Հա՛, կմտնի՛, —դլուխը խորիմաստ շարժելով յեզրափակում եր «խելացի» Գալուստը։

Այնպես վոր յերբ իմացան Սերոբն ել իր սերմացուն ախտահանել է՝ շատ ել չզարմացան։

Բայց մյուս կողմից ել չհասկացան, թե ինչ ռիսկ եր Սերոբի արածը, վոր սերմացուն իր ձեռքով դրեց ախտահանողների տրամադրության տակ և «դեղեց»։

Անցյալ տարի չե՞ր, վոր մոտակա գյուղի մի քանի տնտեսության սերմացուն մնաց հողի տակ ու դուրս չեկավ, չկանաչեց ել։

—Ախր սերմացուն դեղով կլվա՞ն, եդ ո՞վ ա իմացել,—ասում եյին Սերոբենց գյուղում։



Ցեվ հիմա, յերբ Սերոբն ել ընկավ թակարդը, Արշակը, Ալեքն ու Գարսեվանը վճռեցին.—

— Խելքը հացի հետ կերավ։

—Եդ ա դրա հացը, թող ուտի՛։

Բայց խելացի յեր, թե անխելք բան՝ Սերոբի սերմը ախտահանված, ցանված պրծած եր ու խորհուրդ տալը՝ ուշ։

Սպասեցին հետեվանքին։

Գալուստը, մի քանի իր պես խելքների հետ սպասում եյին, թե տեսնեն ինչ դուրս կգա այս պատմությունից։

Ցեվ հետաքրքիր ել եր։ Մանավանդ վոր իրենց սերմը վոչ ղտել, վոչ ախտահանել եյին։ Ցեվ ապահով, մինչեվ անգամ ուրախ, արդեն Սերոբի և կոլեկտիվի արտելի հարցը նրանց համար դառել եր մի տեսարան, խաղ, վոր զբաղեցնում եր այլևս։

Արտերն սկսեցին կանաչել։

—Հը՞, Գալո՞ւստ, դո՛ւս ա գալի, բռնե՛լ ա...

— Սպա՛սեք, մի՛ք վռազի։

—Վո՞նց սպասենք. դեղած սերմը կանաչել ա։ Ասել ա՝ բռնել ա։

— Սպա՛սեք, սպա՛սեք.

«Խելացի» Գալուստը հույսը դրած այն հանգամանքի վրա, վոր առհասարակ կյանքում «սպասելը» միշտ խելացի յե և արդարանում է՝ ասում եր «սպասեք» ու մտածում եր, թե տեսնես՝ ինչպես պիտի պատահեր «փորձանքը», վոր կոլեկտիվը խայտառակվեր Սերոբի առաջ, Սերոբն ել մի լավ խրատվեր։

Անցավ մի քանի ժամանակ։

Լուր բերին.

— Կոլեկտիվի ու Սերոբի արտը չի բարձրանում։

— Այ տղա, դրո՞ւստ...

— Դրուստ եմ ասում,— փսփսաց ուրախությամբ «խելացի» Գալուստի հարեվանը և ժպտալով նայեց Գալուստի աչքերին,— գնացեք, տեսեք,— մեր արտերի կանաչն ու՛ր ա, նրանցն ու՛ր։

— Կարող ա պատահի։ Դեղը վնասել ա սերմին։

— Այ թե թամաշա կըլի հը՞, Գալո՞ւստ։

—Թամաշա ասիր ու պրծա՞ր։

Այդ լուրը շարժեց գյուղացիների հետաքրքրությունը։ Գեղան շատերը, վոր ցանկություն հայտնեցին գնալ տեսնել։

Սերոբն ու «խելացի» Գալուստն էլ դուրս յեկան հանդ, վոր տեսնեն այդ հետաքրքիր տեսարանը։

Սերոբը չեր հավատում, կարծում եր չարախոսություն է։

Ծովեցին ճամբից դեպի արտերը։ Առաջ խոսում եյին, կատակում։ Վոմանք էլ կասկածում եյին, թե լրաբերը կատակ է արել կամ խաբում է։

«Խելացի» Գալուստը մտածմունքի մեջ եր։ Չեր խոսում, նրան մի ուրիշ հարց եր զբաղեցնում։

—Այ տղա, այդ արտը չի բարձրանում, ասենք՝ լավ։ Բա վո՞նց ա եղել, վոր կանանչել ա։

Գյուղացիք էլ զարմանում եյին։

Քանի վոր շատերը տեսել եյին, թե հարևան գյուղի «դեղած» սերմացուն ինչպես մնացել է հողի տակ։

— Սիր եզ վո՞նց են դեղել, ախտահանել, վոր սերմը բռնել ա...

Ու «խելացի» Գալուստը, վոր շատ եր ցանկանում սերմացուի փչանալը, դրա վրա ավելի յեր զայրացել։

Հասան արտերը։



Փառտը, աշկարա, պարզ փաստը մշուշով լցրեց Սերոբի աչքերը։

Իր արտը, կոլեկտիվի արտերը կարճ եյին բռնել... մինչդեռ անհատականներինը բավական բարձրացել եյին։

— Ախր դեղած սերմը վո՞նց կբարձրանա։

— Ո՞վ ա տեսել, վոր սերմը դեղեն։

— Մինչև հիմի, վոր չենք դեղել, հաց չենք ուտեցե՞լ։

— Ահա ես էլ քեզ կոլեկտիվի արտ։

Ու դարձան Սերոբին։

— Ա՛տնածակ, բա քո խելքն ուր եր, խե՛լքը։

Սերոբը ծպտուն չհանեց։ Տաղ արավ ու սուս ու փուս վերադարձավ տուն։

—Ա՛կնիկ, արտս ջուրը տարավ։ Կանանչը կարճ ա։

Սերոբի կինը աչքի տակով կողքանց մտիկ տվեց Սերոբին և խեթեց։

— Ը՛, դե գնա ու կե՛ր։ Վոր ասում եյի...

Այսպես անցավ մի ժամանակ, նորությունը հնացավ և գյուղում հաստատվեց այն համոզմունքը, վոր սերմը չպետք է ախտահանել։

«Խելացի» Գալուստն ուրախ եր, անհատականները հանդիստ, իսկ Սերոբը մտածում եր վոնց անի, վոր ձմռան հացի պաշարը ճարի։

— Խելքս հացի հետ կերա, տե՛ղն ա ինձ,— ասում եր կամաց Սերոբն ու ծրագիր եր կազմում մյուս տարի պապական ձևով ցանելու և մի կերպ նահանջելու կոլեկտիվի մերձավորությունից։

Ու չեր գնում հանդ։ Իր արտերը դառել եյին նրա աչքի գրողը, չեր ուզում տեսնել։

Մի առավոտ էլ Սերոբը նկատեց, վոր դեղամի-
ջում ինչ-վոր վեճ եր սկսված։ Սիրտը կոտրած չեր էլ
ուզում մոտենար։ Անցկենալիս լսեց.

— Բա, սրան ախտահանած սերմ կասեն։ Հիմի վոնց
ե։

«Վո՞նց թե վոնց ե» — մտածեց Սերոբն ու մի փոքր
կանգ առավ։ Ականջ դրեց։

— Բա վոր գյուղատնտեսն ասում եր, բան գիտեր,
չե՞։

Սերոբը մոտեցավ։

Անհատականներն եյին՝ «խելացի» Գալուստը և մի
քանի կոլտնտվորներ, վոր յերկու կողմի բաժանված՝
պայքար եյին մղում կարծես։

—Չի բարձրացել... գնա աչքո՛վդ տես — ասաց
կոլտնտվորը մի անհատականի։

— Բա՞նն ինչումն ա,— խոսեց Սերոբը կես ակա-
մա։

— Վո՞նց թե բանն ինչումն ա,— բղավեց նրա վրա
կոլտնտվորը,—գնա՛ մի արտդ տես։

—Ի՞նչ ա ըլել արտին,—հարցրեց Սերոբը միքիչ
անհանգիստ։

— Ի՞նչ ա ըլել,— գնա տես վոնց են բարձրացել
արտերը։ Մերն ո՛ւր, սրանցն ո՛ւր...

Բոլորը շարժվեցին դեպի հանդը։

Դա հետաքրքիր եր։ Ինչպե՞ս։ Ախտահանած սերմը,
վոր կարճ կանաչ եր տվել՝ հիմի բարձրացել եր և այն
էլ ավելի՞։

Ցերբ հասան արտերը՝ նայեցին չորս կողմը։



«Հրաշքը» պարզ եր և աչկաբաց։

Ախտահանած սերմը հասակ եր քշել, իսկ մյուս-
ները հետ եյին մնացել։

Կոլեկտիվը հաղթել եր։

Խաբուսիկ ուշացում եր յեղել, վոր հետո հանկարծ
քշի վեր ու վեր՝ իր հետեվ թողնելով հին սերմը։

# ԶՐՈՒՅՑ ՈՒՀԱՆ ԱՄՈՒ, ՆՐԱ ՇՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՎՈՐ ԳՐԻ ԱՌԱՎ ՈՒՀԱՆ ԱՄՈՒ ԽՆԱՄԻՆ, ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻՆ

Ոհան ամին լծեց յեզը,
Խաչակնքեց իր յերեսը,
Աստված կանչեց ենպես սրտանց,
Վոր թե վերում լիներ նստած
Աստվածակերպ մի բան... գոնե...
Պիտի իջներ, պիտի ոգներ:

Ենպես բոնեց արտի նամբան.—
Քայլում եյին յեզներն անբան,
Ինքն ել յետից, քայլով յերկու
Ու մի սրտոտ յերգ եր յերգում:
Ցերգեց, քայլեց Ոհան ամին,
Մինչեվ հասավ արտի խամին:

Առավոտ եր: Արեվը վառ
Լուսավորեց յերկիրն արար,
Հողն ու ծովը ու աշխարհը,
Հանդը, արտը, ձորն ու սարը,—
Ու վոնց վոր մի վոսկե դհոլ՝
Արեվը հո՛ղ, արեվը հո՛ղ...



Մեռնեմ պայծառ արեգական,
Իր շորերին վոսկե հագած,
Իր շողերին հասած շեմին,
Ճամբի յեզրի ոշոշներին,
Նրա լույսով ապրող մարդուն,
Քնած լինի, լինի արթուն...

— Ցել—հա, հա՝ յել...
Ու հորովե՛լ...—
Արտն է վարում Ոհան ամին,
Ու լեռնային զուլալ քամին
Զով շոյում է նրա դեմքը,
Ու տանում է նրա յերգը,
Նրա յերգը ու յերգելը,
Ցեզան պես ծանր հորովելը,

Հորովելը, որորվելը:
Կոլեկտիվի վերի արտում
Այդ տրակտորն է հերկում արթուն,
Հերկում արթուն, արագ, արագ,
Վոնց վոր քամի, կտրած կրակ,

Վեր է վազում, վար է վազում,
Հողի շերտը հաստ-հաստ դարտում:
—Ցել—հա, հա յե՛լ,
Ու հորովել...

Ցերեք անգամ յեկավ գնաց
Ոհան ամին, յերեք անգամ,
Մինչ տրակտորը գնաց յեկավ —
Կարաս, հաշվի, քանի՛ անգամ...

Շոգն սկսեց վո՛նց խորովել,
—Ցել հա, հա յե՛լ,
Ու հորովել...

Ցերկրորդ դարձի կեսը չարած,
Վոնց պատահեց... ա՛ քեզ դիպված,
Զուրը քոլի դեմը առավ
Ու կոտրվեց... չարի արկած...
Ոհան ամին կանգնեց սառած.
Դանակ խրես նրա սրտում,
Չի կաթիլ մի կաթիլ արուն...

—Ցել, հա, հա յե՛լ...
Հա-յե՛լ, հա յե՛լ,
Ոհան ամի, քեզ չեր վայել,
Ես տաք որով գործդ սառավ,
Խոփըդ քոլին գնաց առավ,
Ելի՞նչ անես կոտրած չուքով,
Կոտրած չուքով, կոտրած սրտով...

Կանգնել ե նա աչքը խոլոր,
Արտի միջին շվար, մոլոր...
Կոլլեկտիվի վերին արտում
Ժիր տրակտորն ե հերկում արքուն,
Վեր ե վազում, վար ե վազում
Ու շերտերը դարսում, դարսում...

—Թո՛ւ քոռ անվան, ստեղծողին,
Ես ել գո՞րծ ե, ես ել ապրո՞ւստ,
Ես ել գո՞րծե, ես ել ապրո՞ւստ,
Մեռիր ելի, ի՞նչ ես ապրում...
Խառնվեցին որ ու հաշիվ,
Վեր կաց հիմի քաղաք քաշի,
Նորոգել տուր, ել յեռ արի,—
Ոհան ամի, կանգնի պարի,
Լավ ե գործդ, աստված վկա,
Թանիդ թթու ասող չկա...



— Ցել հա, հա յել,
Հա-յել, հա-յել,
Ես նեղ որվան
Ե՞ս եր վայել...
Ցես ի՞նչ անեմ
Կոտրած չուքով,
Կոտրած չուքով,
Կոտրած սրտով:

Մի շեկ աղջիկ թռվռալեն,
Թռվռալեն, վոտին տալեն
Արտը հասավ.—
— Ի՞նչ կա, ասավ,
Ի՞նչ ես կանգնել աչքդ խոլոր,
Արտի միջին շվար, մոլոր,
Ճաշ եմ բերել յես քեզ համար,
Նստի ու կեր, կեր ու ուժ առ:

— Իշտա՞հ մնաց... գնա՛ց, չքվավ,—
Ասավ ամին իր աղջկան,—
Ես տաք որով գործս սառավ,
Խոփը քարին գնաց առավ—.
Մի թումբ փլավ աղջկա սրտում,
Ամու կողքին կանգնեց տրտում.
Ի՞նչ սուտ, ուրախ լուրեր շարեր,
Ամու սիրտը մխիթարեր,
Կանգնեց անզոր, լռեց անմար,
Մեռելատանն ի՞նչ խաղ ու պար...

Աշխարհը լեն, որն արեվոտ,
Շուրջը ծաղիկ, կանաչ ու խոտ,
Արուտ ու հերկ,
Արտուտի յերգ,

Աշխարհն աբար
Մարդու համար,
Մարդու ուրախ
Սրտի համար,—
Մենակ ամին
Սրտով սառավ
Ու չար ժամի
Դեմը առավ,—
Մնաց խոլոր,
Շվար, մոլոր...

Կոլեկտիվի վերի արտում
Ժիր տրակտորն է հերկում արքուն.
Յել— հա, հա—յե՛լ...
Ե՞ս եր վայել:
— Արմենակը...
— Գիրք է սերտում...
— Այ, չար մտնի նրա սրտում,
Յես ի՞նչ անեմ
Կոտրած չուքով,
Կոտրած սրտով,
Վոչ ոգնող կա,
Վոչ էլ վկա
Իմ ավերին,
Իմ ցավերին,
Իշխանության
Պաշտպան կանգնած
Յես հոգի տամ,
Ցես յեզ, յես հաց...

Հրեն... եկավ Արմենակը...
—Վո՞նց է գործդդ...
— Այ կրակը...



Առաջ վազեց Արմենակը,
Վառված-տարված վոնց կրակը
Ու կոմյերիտ տրակտորիստին
Հասավ, ասավ.—
— Արի ըստի,
Յեզն է ընկել ալեվորը,
Արի, շանց տանք մեր շնորքը...
Տրակտորն եկավ տալու հարա.
Ամու արտը տակովն արավ,
Գնաց, յեկավ, յեկավ, գնաց...
Ամու սիրտը մթագնած
Լուսվեց վոնց վոր
Գարնան արեվ,
Գարնան արեվ,
Գարնան արեվ:
Լուսնակն ելավ վոնց վոր սինի,
Ամու սիրտը—մի տիկ գինի,
Ցեռ է գալիս ուրախ խնդուն՝
Զեռկված վոչ մի թիզ արտում:
— Ամի, վեր կալ ել հաշիվը...
— Սաղ մնա ձեր կոլեկտիվը...
Մենակ ձեռով ի՞նչ կգտնեմ,
Կգամ, ախպեր, կոլխոզ մտնեմ:

Ես գրաչյոը գրեցի յես,—
Ձեր ցավերին՝ ախպեր եմ ձեզ,
Լուս ընկերներ,
Կոլխոզնիկներ,
Զուրթ-խուրի տեղ բերեք մաշին,
Հերիք մաշենք
Ցեզան կաշին,

— Ոհան ամի քաղաքի հետ
Ախպեր լինենք, չմնանք յետ...

Աշխարհը լեն,
Որն արեվոտ,
Շուրջը ծաղիկ,
Կանաչ ու խոտ,
Արոտ ու հերկ,
Արտուտի յերգ,
Աշխարհն արար
Մարդու համար,
Մարդու կամքի՛,
Կյանքի՛ համար,
Աշխատավոր
Բազկի՛ համար,
Հասկի՛ համար,
Հառկի՛ համար...



ԽՆԿՈ ԱՊԵՐ

# ԲԵՐՔԻ ՏՈՆԻՆ— ԻՄ ԱՆՏՈՆԻՆ

Ճանաչես դուշման՝
չես լինի փոշման:

Բամբակացան
գյուղացի,
Դուշմանդ ո՞վ է,
իմացի:
Կարդա գիրքը
«Մանկալ»-ի,
«Վնասատուն
բամբակի»,
Լավ խրատ է
քեզ տալի.
Սուտ չի ասում,
դորդ է, դորդ,
Բամբակն ունի
մի չար վորդ.
Քեզ լավ ծանոթ
թրթուրը,
Վորտեղից է
եդ հյուրը,
Թափվի դրա
աբուրը.

Հե՞ր բաց արիր
 քո դուռը,
Ու ներս առար
 եղ ծուռը:
Ասե՛մ, ասե՛մ,
 ա՛յ քե՛ռի,
Դա ձվիցն է
 թեթեռի.
Լուսով լալ չի
 յերևի,
Ցերեկները
 սուտ սատկում,
Գիշերները
 տերևի
Սիրտն ու հոգին
 ծակոտում:
Ապա անցնում
 կնգուղին,
Միջուկն ուտում
 ու լափում,
Ենտեղ փռում
 անկողին,
Ընկնում մեջը
 մրափում:
Եղպես ուտում,
 զբաղնում,
Քո բամբակն է
 չորանում:
Ել ասելու տեղ չկա,
 դու կարծում ես դե՞ղ չկա.
Գյուղատնտեսը դեղ ու դարման
 կտա քեզ,



Վոր բամբակդ
 արակես.
Վոր ազատես
 թրթուրից.
Վորդից, մորդից
 ու չորից,
Վոր ստանաս
 միշտ հարկ, հա՛կ
Քոռ չկած
 լավ բամբակ.
Թե չե քեզպես
 ՀԱՄԲԱԿԸ
ՏՈՒՆ ՉԻ ԲԵՐԻ
 ԲԱՄԲԱԿԸ:

---

Ս. ՏԱՐՈՆՑԻ

## ՑԵՍ ՆՈՒՌ ԵՄ

Ցեսնուռ եմ, սիրով հուռ եմ,
Ջահել տղին մըրմուռ եմ,
Սրազի պես լափ կտամ,
Սեր ու սավդա կըվառեմ:
Այ տղա՛, հանդ ես գընում,
Կոլեկտիվ արտ ես գընում,
Կեպին թեքել ես ճակտիդ,
Ենպես հրպարտ ես գընում:
Տրակտորը քըշում ես,
Մըրգով լիքը աշուն ես,
Աչքով, ունքով ես անում,
Սիրտ ու հոգիս մաշում ես:
Ետոր ինձ յար ես դառել,
Կուլակին քար ես դառել,
Կոլեկտիվի ուժիցը
Գյուղի մեջ սար ես դառել:
Համ խելոք ես, համ տալ ես,
Մի ակտիվ կոմսոմոլ ես,
Կոլեկտիվըդ շեն մնա՝
Սիրով ու սուփրով բոլ ես:



Ն. ԶԱՐՅԱՆ

## ՀՈՒՆՁԸ

Ծույլ է հնձում գերանդին,
Ցե՛կ, հունձ անող մեքենա,
Հունձը հանդում կմնա,
Թույլ է հնձում գերանդին:
Ցեռ ու յեռանդ բեր հանդին,
Հունձդ հնձիր ու գնա,
Ծույլ է հնձում գերանդին,
Ցե՛կ, հունձ անող մեքենա:

Ն. ՉԱՐՅԱՆ

## ՀՆՉԱՎՈՐԸ

Տխո՛ւր է զնգում գերանդին,
Հասկերը շրշում են—«ել ո՛ւշ է...»։
Ինչքան ել յեռաս յեռանդից,
Արդեն գերանդին անուժ է։

Հրեն յերբ հնձվոր մաշինան
Շախով շափշափում է անդին,
Շպրտում է խուրձերը շինած,—
Ել ո՛ւր է զնգում գերանդին։

Ե՞յ—քոնն է հունձը, մաշինա,
Իզուր է զնգում գերանդին։

---



ԱՂԱՎՆԻ

## ԱՐԵՎՆ ՑԵԼԱՎ

Արեվն յելավ, շողքը գցեց
Հանդի վրա, Սոնա ջան,
Հորձանք տվեց ու սվսվաց՝
Վոսկե արտը շորորան։

Ցորնի արտը տես ինչպես վառ
Շողշողում է անուշ ջան,
Վոսկեծամիկ աղջկա նման
Նազկտում է, յարո ջան։

Զրանցքն եկել արտը ջրել,
Արտն հասել է, Սոնա ջան,
Հասկը յելել, հերկը ծածկել,
Շորորում է, յարո ջան...

Տես, քաղաքից ինչ է բերել,
Կեպիավոր են տղեն,
Մեր արտերին խինդ է բերել
Ու տրակտորը են տղեն։

Թեվդ քշտի՝ գնանք արտը,
Կոլեկտիվով հունձ անենք,
Լիքն է յերգով ես իմ սիրտը,
Ես մաշինով հունձ անենք։

Արեվն յելավ, արտը ծփաց,
Քամին յերգեց, Սոնա ջան,
Մեր մաշինը արտը դնաց,
Դե շտապիր, յարո ջան։

Վ. ՏԱԼՅԱՆ

# ԵՍ ԲԵՐՔԸ ԲԱՐԻՆ Ա

Ես բերքը բարին ա,
Ցորենը կալին ա,
Գութքի վադեն թըմմել ա,
Տրակտորի տարին ա:
Ճամբեմը շոշել ենք,
Կոլխոզը դոշել ենք,
Սելի վադեն թըմմել ա,
Մաշինի տարին ա:
Հին տունը փըլել ա,
Կուլակը զըլել ա,
Զոռքի վադեն թըմմել ա,
Բատրակի տարին ա:
Միջակ-չքավոր ենք,
Բանելու սովոր ենք,
Կոլխոզ աղջիկ, կարմբել ես,
Սիրելուդ տարին ա:
Բամբակը փարրիկին,
Ջիթը կոլխոզնիկին,
Ղրս-հողի վախտն եկել ա,
Զրելու տարին ա:



Ն. ԶԱՐՅԱՆ

# ՊԱՏՄՈՒՄ Է ՔԱՆԴԻՆԳՀԱՋԱՐԱԿԱՆԸ

(Հատված «Բրիգադիրի բլոկնոտից»

Ներկաները նույնպես պաշտպանում էին Սամսոնի տեսակետը: Ցեթե այսպիսի մի առաջարկ լիներ էքքավորական նիստում, անկասկած ձայների բացարձակ մեծամասնությամբ կանցներ: Մենք այնտեղ հարցը դրինք ամբողջովին միացնելու կամ չմիացնելու ձևով և բնական եր, վոր պիտի անցներ միացնելու առաջարկը:

***

Կոլլեկտիվի ընդհանուր ժողովը հավաքվեց:

Սկզբից ևեթ դահլիճը բաժանվեց տարբեր շերտերի: Կոլլեկտիվ շարժման բոլոր կողմնակից ուժերը հավաքվեցին առաջին շարքերում կամ խոնվեցին բեմում: Ցետեվի շարքերում հավաքվեցին կոլլեկտիվի հակառակորդներն ու բոլոր «մածուն ուտողները», այսինքն՝ չքավոր ու միջակ այն տարրերը, վորոնք կուլակների կողմից կաշառվելով՝ պայքարում էին կոլլեկտիվ շարժման դեմ: «Մածուն ուտող» եր անվանում նրանց Արշակ Սահակյանը, վորովհետև «նրանք կուլակների տան մի քրեղան մածուն են ուտում և գալիս են ժողով՝ կուլակի շահը պաշտպանելու»:

Զարմանալի կերպով բոլոր տատանվողները մինչև շարքերում եյին նստած կամ կանգնած։ Դահլիճի այդ շերտավորումն սկզբից ևեթ իմ աչքին խփեց, վորովհետև գյուղացիների մեծ մասին սկսել եյի արդեն ճանաչել։ Ժողովի ընթացքն արդարացրնց իմ այդ դիտողությունը։ Բացի դրանից, մյուս գյուղերումն ել նման ժողովներ անցկացնելիս միշտ ստացվում եր ուժերի այդպիսի դասավորում։ Պետք է ասել, վոր այդ միանգամայն ձեռնտու յեր կոլեկտիվի թշնամիներին և չափազանց խանգարում եր մեզ։ Նրանք, ովքեր մտադիր եյին այդպիսի ժողովները պայթեցնել, միշտ և շարունակ կենտրոնանում եյին յետեվի շարքերում։ Վորովհետև այնտեղից ավելի հեշտ եր աղմկել, պրովոկացիա անել ու մնալ աննկատելի։ Մինչդեռ մերոնք՝ խռնվելով բեմը՝ վոչ միայն զրկվում եյին դահլիճի տրամադրության վրա ազդելու և կարգապահությանը հսկելու հնարավորությունից, այլև հաճախ իրենք իրար հետ խոսելով խանգարում եյին զեկուցողին ու նախագահությանը։

Մերոնց բեմը խռնվելու աննպաստակահարմարությունն առանձնապես նկատվում եր քվեարկությունների ժամանակ, յերբ մեր առաջարկություններին բեմը և առաջին շարքերը քվեարկում եյին թեր, իսկ յետեվի շարքերը՝ դեմ։ Այսպիսով, ստացվում եր արհեստական հակադրություն՝ բեմի և դահլիճի, ղեկավարության և մասսայի։

Այդ ձեվական հակադրությունը մի անգամ ոգտագործեց Արղաքյանդ գյուղում մի յենթակուլակ հայտարարելով.—

— Բեմում հավաքվել ու վորոշում եք... չմ'ք տեսնում, վոր մասսան դեմ է ձեզ։



Ցեռ ու Բենիկը նախապես գրուցազրել եյինք ընկերներին, վորպեսզի վոչ թե բեմը հավաքվեն կամ տեղ բռնեն առաջին շարքերում, այլ ցրվեն ամբողջ դահլիճում ու հատկապես յետեվի շարքերում։ Չնայած այս նախազգուշացման, ելի բոլոր կոմյերիտականները, կուսակցականները, ակտիվ էջավորները ու միջակները հավաքվեցին բեմ, իսկ յետեվի շարքերը թողին Ցերամի, Ցեղնակի ու Սերոբի տրամադրության տակ։

Բենիկը բեմում խռնվածներին առաջարկեց բեմը զատարկել և ցրվել դահլիճի մեջ։ Սակայն դահլիճն արդեն այնքան եր լցված, վոր շարժվելու և վերադասավորվելու վոչ մի հնարավորություն չկար։ Դահլիճում ճխտված մասսան հինգ րոպեյի չափ տարուբերվեց, ալեկոծվեց, մռլտաց, ճողփաց, բայց կրկին հանվեց, դարտվեց՝ ամեն մի խմբավորման թողնելով եր նախկին տեղում։

***

Մնում եր սկսել։ Բայց այդ րոպեին բազմությունը ձեղքելով՝ ինձ մոտեցան Արշակ Սահակյանն ու կոմյերիտական Անուշավանը։ Արշակը ծոցից հանելով առաջ պարզեց մի կեղտոտ ու ճմռտված թուղթ։

— Ընկեր Վահան, կարդա, տես ի՞նչ են գրել։ Կպցրել եյին կոոպերատիվի դռան։

Այդ մի կոչ եր՝ ուղղված կոլխոզշարժման դեմ։

«Ցեղբայր գյուղացիներ, խորհրդային իշխանությունը ձեր աչքերին թոզ է փչում, թե ինքը բանվորների և գյուղացիների իշխանություն է։ Բայց իրականում նա միայն քաղաքի ծառայողների իշխանություն է։ Խորհրդային իշխանությունը ձեզ խաբում

և, քաշում է կոլեկտիվ տնտեսության մեջ, իսկ ավելի հեշտությամբ ձեզ խաբի, թալանի ու տա քաղաքի ծառայողներին։ Եթե կոլեկտիվ տնտեսությունն այդքան լավ բան է, ինչո՞ւ քաղաքներում կոլեկտիվներ չեն կազմակերպում, այլ միայն գյուղերում են կազմակերպում։ Պարզ է, յեղբայր գյուղացիներ, խորհրդային իշխանությունը ձեզ խաբում է, վոր ավելի յերկար ժամանակ շարունակի ձեզ պահել իր արյունոտ լծի տակ։ Եղբայր գյուղացիներ, կոլեկտիվը ձեր թշնամին է, միք մտնի կոլեկտիվ, դուրս յեկեք կոլեկտիվից, թող վոչնչանան ու վերանան գյուղից կոլեկտիվն ու խորհրդային իշխանությունը։ Մոսկվայի կոմիտեյի շտաբից դեպի Հայաստան»։

Կոչը յես ծալեցի դրի գրպանս և Տիգրանին խընդրեցի, վոր ժողովը հայտարարի բացված։

— Դին-դոն... զողանջեց ժամի զանգն այն ժամանակ, յերբ Տիգրանը հայտարարեց.

— Ընկերներ...

Յես սկսեցի կրկին դեկուցել։ Բայց դեռ չեյի ավարտել առաջին զեկուցումը, յերբ Սերոբ Անտոնյանը բարձր հաղաց։ Նրան հետևվեց նաև Եղոնակը։ Գալուստն ել ել ուզում հաղալ, բայց դալով իր վրա իմ հայացքը, տատանվում ել։ Առաջին հաղերին յես ուշադրություն չդարձրի և շարունակեցի զեկուցել։ Ձայնս չափազանց խզված ել և միայն կատարյալ լռության պայմաններում կարող ել լսելի դառնալ բոլորին։ Բայց յետևի շարքերում հաղը շարունակվում ել սաստկանալ և իմ ձայնի տակ հնչյունները դժվարությամբ եյին ճանապարհ բացում դեպի մարդկանց լսողությունը։

Նախագահը փորձեց միջամտել.



— Դադարեցրեք հաղը, ընկերներ, խանգարում եք զեկուցումը։

Սպասում եյին այսպիսի մարտահրավերի։ Յետևի շարքերում պոռթկաց դիտումնավոր հաղերի համազարկը։ Հաղացին մինչև անգամ միջին շարքերից մի քանիսը։ Հաղացին նաև բեմում հավաքվածներից վոմանք։ Հաղացողներից շատերն անկասկած դիտումնավոր կերպով չեյին հաղում, այլ պարզապես վարակվում եյին մյուսներից։ Հաղն ու հորանջը վարակիչ են։ Յես հարկադրվեցի մի պահ սպասել, մինչև հաղն ու վերջացնեն։ Ժամի զանգը շարունակում ել ավելի ու ավելի յեռանդուն զողանջել.

— Դին-դոն, դին, դոն, դին, դոն...

Հաղերը մեղմացան և յես փորձեցի շարունակել։ Բայց հենց վոր սկսեցի, նորից սաստկությամբ բարձրացած հաղերը ծածկեցին իմ ձայնը։ Յես կրկին սպասեցի, կրկին մեղմացան հաղերը, կրկին սկսեցի ու կրկին ընդհատեցին ինձ դիտումնավոր հաղերը։

Վեր կացավ Բենիկը։ Գունատված, լայնացած քթածակերով, սպառնագին, նա կոչ արեց դադարեցնել հաղերը։ Բայց Բենիկի մետաղահնչյուն ձայնը նույնպես կորավ մասսայական հաղի պղտոր ալիքների մեջ։ Բենիկը նստեց։ Նա զողում ել ջղայնությունից։

Վեր կացավ Գեղամ Զիլիֆյանը։ Եղջյուրաձև բեղերը դարձրեց դեպի յետևի շարքերն ու ծկլթաց.

— Տո, խայեր, հորի՞ խելքաք։ Հորի՞ չթողուք, վոր ընկեր բրիգադիան գյուր խոսքն ասե։ Թողեք, ինք խոսե, լմնցու, մենք լե կըսենք՝ դաբուլ չենք։— Հաղը միանգամայն դադարեց և Գեղամ Զիլիֆյանը հաղթական դիրքով նստեց։ Լեվոն Մարտիրոսյանը «կարեկ-

ցաբար» նայում եր իմ յերեսին՝ հասկացնելով ինձ, թե «անհասկացող ժողովուրդ ե, ի՞նչ գործ կարելի յե անել այսպիսի ժողովրդով»։ Արշակ Սահակյանը տանջանքով և ատելությամբ ամբողջ ժամանակ յետ եր դառնում և իր մանրիկ, բայց ծակող աչքերով սաստում եր հաղացողներին։ Զելիֆյանի յելույթի ժամանակ նա չկարողացավ զսպել իր կատաղի հեգնանքը։ Ուստի հենց վոր Գեղամը նստեց, Արշակը ձայն խընդրեց։

— Ընկերներ,— արտասանեց նա ծանր, զսպված ատելությամբ,— մենք ճանաչում ենք հաղացողներին. եդ նրանք են, վոր Յերամենց Թաղևոսի տան մածնի ամանները քարտել են ու յեկել այստեղ նրանց անունից հաղալու։ Եդ կուլակի հաղն և, ընկերներ, կուլակն ե հաղում ընդդեմ կոլեկտիվի։ Յես առաջարկում եմ հաղացողներին դուրս շպրտել ժողովից։

Արշակի վերջին խոսքերը ծածկվեցին ծափերի և հաղերի խառն հնչյուններով։

Հաղացողների դեմ խոսեց նաև Գեվո Գեվորգյանը։ Այն Գեվոն, վոր յերկու շաբաթ առաջ Բենիկի հետ սուր ընդհարում ունեցավ։

— Ինչքան ուզում եք հաղաք, ուզում եք հաղալով տրաքեք,—ասավ նա,—մենք ես գործը գլուխ կբերենք։

Հաղացողների դեմ խոսեցին շատերը՝ բեմից, առաջին շարքերից, մինչին շարքերից, մինչեվ անգամ յետևում կանգնածներից, բայց հաղերը շարունակվեցին ավելի ու ավելի ոնվական ու սաստիկ դառնալ և ուղղակի մարտահրավերի բնույթ ստանալ։

— Ձենք ուզում լսել. խարում ենք մեզ,— աղաղակեց հաղթանդամ Գեղնակը,—դուրս գնանք, ընկերներ։



— Դին, դոն, դին, դոն, դին, դոն, դին, դոն...

Ցետեվի շարքերը շարժվեցին դեպի դուրս։ Մի-ջին շարքերում տիրեց չփոթություն։ Մի քանի հոգի վեր կացան։ Ցես զգացի կրկին արյան բաղխումը քունքերիս։ Ցեվ մոռանալով ձայնիս տկարությունը՝ յես աղաղակեցի.

— Ընկերներ...

Իմ ձայնը, չնայած խզված լինելուն, հնչեց զարմանալիորեն հուժկու և ազդեցիկ։ Բոլորը կանգնեցին։ Ցես սկսեցի խոսել. բայց արդեն վոչ թե կոլխոզչինարարության կոնկրետ հարցերի մասին, այլ հաղացողների և ժողովը պայթեցնելու փորձ կատարողների դեմ։ Ցես չեմ հիշում, թե ինչ եյի խոսում և ինչպես եյի խոսում, բայց ժողովը կանգնեց։ Դուրս գնացողները կրկին վերադարձան և հաղը դադարեց։ Կրկին ինձ հաջողվեց նվաճել դահլիճը։

— Դին, դոն, դին, դոն, դին, դոն, դինդոն, դինդոն, դինդոն... ղողանջում եր կատաղի ժամի զանգը։

Բայց յես արդեն անցել եյի զեկուցման բուն նյութին և հեգնական ժպիտը կրկին խորտակվել եր Ցերամի հակակրելի բերանի վրա։ Ցես մանրամասն բացատրեցի կթանների միացման նշանակությունը և վոչ մի ջանք չխնայեցի նախապատրաստելու շրջանային կենտրոնի վորոշման հաղթանակը։ Զեկուցումից հետո առաջին հարցը տվեց Գեվոն.

— Կոլեկտիվի կթանների մասուլը մեզ ձրի պիտի տա՞ն, թե փողով։

— Վոչ ձրի, վոչ ել փողով,— բացատրում եմ յես,— ընկեր Գեվորգ։ Կոլխոզում վոչինչ ձրի չի տրվում։ Իսկ կոլխոզի ոնաշխատունակ անդամներն ստանում են

հատուկ ֆոնդից, վոր հատկացնում է նրանց կոլեկտիվը:

— Ցես չասի՞,— հաղթական չարությամբ բացականչեց Ցերամը:

— Ի՞նչ դու չասացիր, ընկեր Ցերամ:

— Փողով եք տալիս, ելի՞, մեր սեփական կթանից ստացած ապրանքը փողով ծախում եք մեզ:

— Փողով չենք ծախում, ընկեր Ցերամ: Հարցն այդ կողմի վրա չուռ մի տա: Ի՞նչ է նշանակում՝ «փողով եք ծախում»:

— Բաս աշխատավարձի դիմաց վոր տալիս եք, չէ՞ ընի փողով:

— Ընկեր Ցերամ, քո սեփական կովի վրա դու աշխատանք թափո՞ւմ ես...

— Այո՛, թափում եմ:

— Նրան կերակրո՞ւմ ես, տակը մաքրում, աղբը թափում, ամառը արածացնում, կինդ կթում է, մերում, հարում:

— Այո՛, եղ դիպ անում ենք:

— Եղ բոլորը փող արժե՞, թե վոչ:

— Վոնց թե փող արժե... յես իմ կովին կերակրում ու խնամում եմ, ել ի՞նչ փող:

— Ընկեր Ցերամ, յեթե այդ բոլորը քո կովին չտայիր, այլ տայիր ուրիշի կովի, փող չեյի՞ր առնի դրանց դիմաց:

— Կառնեյի:

— Նշանակում է՝ այդ բոլորը փող արժե:

— Այո՛, արժե:

— Նշանակում է՝ դու քո կովից նույնպես նրա յեկամուտն ստանում ես փողով, այսինքն՝ քո թափած աշխատանքի, քո տված կերի, խնամքի դիմաց: Ցեթե



դու կովին չկերակրես, չխնամես, ուրիշ խոսքով՝ յեթե դու նրա վրա ծախս չկատարես, նա քեզ կաթ չի տա ձրիաբար:

— Իհարկե, չի տա:

— Հապա ինչո՞ւ յես պահանջում, վոր այդ նույն կովի կաթը կոլեկտիվում դու ստանաս ձրիաբար:

— Վո՞նց թե ձրիաբար,— համառում է Ցերամը,— յես կոլեկտիվում նրան չե՞մ խնամում, նրա վրա աշխատանք չե՞մ թափում, քաղաքի ծառայողները կգան կովս կպահե՞ն:

Դահլիճը ծիծաղում է:

— Ընկեր Ցերամ,— չարունակում եմ բացատրել յես,— կոլեկտիվում կատարած քո աշխատանքի համար դու կստանաս աշխատավարձ: Դու ուզում ես համ աշխատավարձն ստանալ, դնել դրպանդ, համ ել այդ աշխատանքիդ արդյունքը ձրի՞ ստանալ: Եղ վո՞ր գերքումն է գրած: Հորդ խելացի տղեն դո՞ւ յես:

Դահլիճը կրկին ծիծաղում է:

— Պա՞րզ է, ընկերներ,—հարցնում եմ յես:

—Պարզ է,—ձայնում են ամեն կողմից: Բայց ելի մեկը վեր է կենում ու տարակուսած հարց է տալիս.

— Ախար, ընկեր Ջան, վո՞նց կըլի, վոր իմ սեփական կովի կաթն ինձ փողով ծախեք, կամ թե չե աշխատավարձից դուրս դաք:

Ցես ելի բացատրում եմ նրանց, վոր ուրիշ կերպ լինել չի կարող, վոր կոլեկտիվը չի կարող յուրաքանչյուրին և աշխատավարձ վճարել, և յեկամտից ձրի բաժին հանել և այլն:

Դահլիճում տիրում է չփոթմունք: Կոլեկտիվի անսասան կողմնակիցներն անդամ դժգոհության նշան-

ներ են անում։ Ցես հետզհետե սկսում եմ կորցնել դահլիճի վստահությունը։

— Ընկեր Վահան,—նորից ե ձայնում Գեվոն,— յես ձեր ասածը հասկանում եմ։ Իմ կարծիքով եդ ուղիղը։ Բայց գյուղատնտեսը մեզ եդպես չի ասել։ Նա անցյալ օրը մեզ ասաց, թե համ աշխատավարձ կատանաք, համ ել ձրի ցորեն, յուղ, կաթ, մածուն և այլն։

Ցես տարակուսած նայում եմ Տիգրանի ու Գրիգորի յերեսին։ Նրանք ևս շփոթվել են և աչքերով հասկացնում են, վոր գյուղատնտեսն իրոք բացատրել ե այնպես, ինչպես հասկացել ե Գեվոն։ Հետագայում պարզվեց, վոր վոչ միայն գյուղատնտեսը, այլև մի քանի ուրիշ ագիտատորներ այդպես են հասկացրել կոլխոզի բոլոր անդամներին։ Այնպես, վոր կոլխոզի նախագահն ու քարտուղարը նույնպես պատկերացնում են, թե իբր յուրաքանչյուր կոլխոզնիկ ստանալու յե, աշխատավարձից բացի, նաև բոլոր կենսամթերքները ձրի։ Այդպես եր ըմբռնել հարցը նաև Բենիկը և ինձ հետ վիճեց այդ առթիվ մինչև Ալափարս, մեղադրելով ինձ կոլխոզի շարքերում անտեղի կասկածներ առաջացնելու մեջ։

— Ընկերներ,—սկսում եմ նորից իմ բացատրությունը,— յես չգիտեմ, թե գյուղատնտեսն ինչպես ե բացատրել, յես չգիտեմ, թե ով ինչպես ե հասկանում, բայց ճիշտն այն ե, ինչ վոր յես ասում եմ։ Մեր կոլեկտիվը կոչվում ե յերկրորդ տիպի կոլեկտիվ, այսինքն՝ գյուղատնտեսական արտել։ Մենք կիրառելու յենք աշխատավարձի սիստեմ։ Թե ինչու յենք կիրառում, դուք այդ գիտեք։ Հետևվաբար, անհնարին բան ե կոլխոզի յեկամուտը ձրի բաժանել։ Հապա աշխատավարձը վորտեղի՞ց կվճարենք։ Ձե՞ վոր հենց այդ յեկամուտն ե, վոր բաժանելու յենք իբրև աշխատավարձ։ Եթե մենք ամբողջ յեկամուտը ձրի բաժանենք կոլեկտիվի անդամների մեջ, այն ժամանակ աշխատավարձ չենք կարող վճարել, այսինքն՝ մեր կոլեկտիվը կդառնա վոչ թե արտել, այլ կոմմունա։ Ցես ձեզ արդեն ասել եմ, վոր մենք այժմ չենք կարող անցնել կոմմունայի և այդ դուք հրաշալի հասկանում եք։

Այնուամենայնիվ մի չարք կոլխոզնիկներ, միանգամայն հարազատ մարդիկ, վոչ մի կերպ չկարողացան պատկերացնել, թե վո՞նց կարող են իրենք իրենց արտերի և անասունների յեկամուտը փոխով ստանալ։ Մանավանդ կանայք չեյին կարողանում այդ ըմբռնել։ Նրանց կարծիքով՝ արտը, կովը, ցորենն ու կաթը տրամրվիս են ձրի, վորովհետև իրենց աշխատանքը նրանք չեն գնահատում իբրև արժեք։ Սակայն նույն այդ աշխատանքը փոխադրելով կոլեկտիվի մեջ՝ նրանք արդեն արժեքավորում են։ Դրա համար են պահանջում և աշխատանքի արժեք աշխատավարձ և ձրի յեկամուտ։ Քաղաքատնտեսական այս թյուրիմացությունը վերանալու մոտ այնքան համառ եր բուն դրել, վորի դեմ անոգուտ գտնվեցին իմ բոլոր պարզաբանումները։ Մանավանդ վոր այդ թյուրիմացությունը նախորդ հաստատված ու ամրապնդված եր գյուղատնտեսի և մի քանի ագիտատորների կողմից։

Այս թյուրիմացությունից ծայրահեղ ճարպիկությամբ ոգտվում եյին կոլեկտիվի թշնամիները։ Զարախընդորեն նրանք հասկանում եյին, վոր և գյուղատնտեսը, և մյուս ագիտատորները և կոլխոզի տեղական ղեկավարները թյուրիմացաբար խաբել են կոլխոզի անդամներին, և վաղ թե ուշ այդ թյուրիմացությունը

նը կբացվի։ Ցես նոր ըմբռնեցի այն չարախնդաց ուրախությունը, վորով Ցերամը կրկին բացականչեց.

— Ցես չասացի՞... փողով են ծախում ելի՞...

— Մեզ խաբում են, հիմարի տեղ են դրել,—հնչեց յետեվի շարքերից։

— Ամեն մեկը մի բան է ասում...

— Գնանք,—գոչեց հաղթանդամ Ցեղնակը և յետեվի շարքերը նորից հորդեցին դեպի դուրս։

— Դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն... մոլեգնած շարունակում եր ժամի զանգը։

— Զահրումար,— բացականչեց կատաղությամբ մի յերիտասարդ.—դու ի՞նչ ես ձենդ դցել։

—Լեզուդ քեզ քաշի, ընկեր Թեվոս,—պատասխանեց նրան Լեվոն Մարտիրոսյանը,—ի՞նչ իրավունքով ժողովրդի հավատը հայհոյում ես։ Խորհրդային իշխանությունը քեզ թույլ չի տալիս, վոր ժամին անպատվես։ Գնանք, ախպեր, եստեղ մնալու տեղ չի։ Մի քիչ լե մնանք, մեզ կնիկ ել կհայհոյեն։

Ու Լեվոնը վեր կացավ՝ իր յետևից քաշելով նաև միջին շարքերը։

— Ընկերներ...

— Ընկերներ...

— Ընկերներ...

Հերթով գոչում ենք յես, Բենիկն ու Գրիգորը։ Բայց դահլիճը հոսում է դեպի դուրս։

— Սպասեցեք...ինձ համար անճանաչելի ձայնով աղաղակում եմ յես։

Հոսանքը դադարում է։

— Դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն...



— Ընկերներ, Ղարաջորանի կոլխոզնիկներ, մի՞թե դուք յենթարկվում եք ձեր թշնամիների ստոր պրովոկացիաներին։ Մի՞թե դուք կարծում եք, վոր խորհրդային իշխանությունը ձեզ կխաբի ու կշահագործի, մի՞թե կարծում եք, վոր բանվոր դասակարգը ձեզ կխաբի ու կշահագործի։ Ո՞վ եր ձեզ ազատեց պատերազմից ու դաշնակների արյունոտ լծից, կուլակի արյունածարավ ճանկերից— բանվորները, խորհրդային իշխանությունը։ Ցեվ այսոր դուք չե՞ք լսում բանվոր դասակարգին, գնում եք ձեր յերեկվա ու այսորվա թշնամիների յետեվի՞ց։ Գնացողները թող գնան։ Մենք մնացողների հետ կվերջացնենք աշխատանքը։ Այսոր ջոկվում են բարեկամն ու թշնամին։ Բանվոր դասակարգի իշխանությունը կարող է ջախջախել իր թշնամիներին։

Վերջին խոսքերն սպառնալից բնույթ եյին կրում։ Հակառակ իմ կամքի ձայնս նույնպես սպառնական յեռանդ ստացավ։ Դահլիճը կրկին կայունացավ։

— Ընկերներ,—շարունակեցի յես,—ով ցանկանում է դուրս գալ կոլլեկտիվից, թող գնա, վորպեսզի մենք շարունակենք ժողովը։

Վոչվոք տեղից չշարժվեց։

— Շարունակում ենք ժողովը,—հայտարարեց Տիգրանը,—ո՞վ է ուզում հարցեր տալ։

Տրվեցին մի քանի սովորական հարցեր, վորոնց յես պատասխանեցի։

Դահլիճից դուրս գնացողները տեսնելով, վոր մասսային չկարողացան տանել իրենց յետեվից՝ ելի կամաց-կամաց վերադարձան դահլիճ։

Ցես զգացի, վոր կոլխոզը ձեռքից տալու յերկյուղն ինձ դրդել եր ավելորդ խոսքեր ասել և անուղղա-

կի կերպով խախտել կոլխոզշարժման կամավորության սկզբունքը։ Ցեռ, վոր կռվում եյի՝ այդ սկզբունքը խախտողների դեմ։ Ուստի տրված հարցերն ոգտագործելով՝ ցանկանում եյի մի անգամ ել անդրադառնալ այդ հարցին և շտկել կատարած սխալս, յերբ Բենիկն ինձ ընդհատեց։ Նա քաջալերված այն հանդամանքից, վոր իմ սպառնական տոնը դահլիճը կայունացրեց, ցանկանում եր, ըստ յերևույթին, այդ կայունացումն ավելի ամրապնդել։ Ուստի սկսավ կրկնել իմ քիչ առաջվա ճառը, ավելի սաստկացրած շեշտով և հասցրեց համարյա մինչև այնտեղ, վորտեղից մի քայլ եր մնում ասելու «կոլխոզից դուրս յեկողին մենք ցույց կտանք»։

Նորից դահլիճը հուզվեց։ Նորից ժողովը ցրելու կոչեր ու նորից։

— Դինդոն, դինդոն...

Այս անգամ ել հաջողվեց մեզ դահլիճը պահել։ Այս անգամ յես գլխի ընկա, վոր վոչ իմ կրակոտ ճառերը, վոչ ել Բենիկի ահեղ յելույթները մեզ չեյին ոգնի, յեթե մենք առաջուց չունենայինք կազմակերպված չքավորական կորիզը, վոր մի խումբ կայուն միջակների հետ նստել եր առաջին նստարանի վրա և իր աներեր դիրքով վորոշում եր կոլխոզի ճակատագիրը։ Հակակոլխոզական թայֆան դուրս եր գնում՝ ամեն անգամ իր յետևից տանելով դահլիճի յեթե վոչ կեսը, գոնե մեկ յերրորդը։ Բայց մի քանի րոպե հետո վերադառնում եյին բոլորը՝ վախենալով, վոր ժողովում մնացածները ի վնաս նրանց վորոշումներ կընդունեն։ Այնպես վոր վերադարձավ նաև Լևոն Մարտիրոսյանը և դժգոհ դեմքով նստեց իր առաջվա տեղը։ Նա կրկին նայում եր իմ յերեսին՝ հայացքով ինձ հաս-



կացնելու համար, վոր ինքը ժողովից դուրս գնաց վոչ թե այն պայթեցնելու նպատակով, այլ վիրավորված մի ինչ-վոր սրբապղծությունից, դրդված ամենատգնեիվ մղումներից։

Վողբալի յեր կոմսոմոլի քարտուղարի, Ցենոք Մարտիրոսյանի դրությունը։ Նա ամբողջ ժամանակ ինքն իր հետ կռիվ եր մղում։ Մի քանի անգամ յելույթ կատարեց։ Բայց յես զգում եյի, վոր նրա լեզվի տակ ուրիշ բան կա և նա փոխանակ այդ ասելու, ուրիշ բան եր ասում։ Ցերբ մյուս կոմսոմոլիստները՝ Գերասիմը, Զանիբեգը, Համոն, Անուշավանը վեր եյին կենում և սպառնում եյին հակակոլխոզական, հակահեղափոխական բոլոր «ելեմենտների դմակները պատռել» (դիմակները պատռել), նա գունատվում եր և գլուխը կախում ծնկների վրա։ Նրա այդ գունատման պատճառը գիտեյին միայն Գրիգորը, Վասիլը և Անուշավանը, վորոնք խորհրդավոր հայացքներ եյին փոխանակում միմյանց հետ։ Ցես ու Բենիկը նույնպես իրազեկ եյինք։

Աղախան բիձան, վոր վաղուց եր դադարել Լևոն Մարտիրոսյանի հոդան այցելելուց, նստել եր դահլիճի մի անկյունում և շարունակ ինքնիրեն ժպտում եր։ Նա առիթ եր վորոնում, վոր բարձրանա և ասի՝ «վալա-կխալա ու դմարդու ականջը կլնա»։

Չքավորական ժողովի ամբողջ կամքն ու դիտակցությունը կենտրոնացել եր Արշակ Սահակյանի մանրիկ ու փայլուն աչքերի մեջ։ Նա ամբողջ ժամանակ հրամանատարի հայացքով նայում եր աջ ու ձախ։ Կարծես իր հայացքների սրածայր բեվեռներով շարունակ իրար եր դամում ու ամապնդում չքավորական խմբակի անդամների դիտակցությունը։

— Արշակ Սահակյանն ինչո՞ւ կուսակցության մեջ չի,—հարցրի յես կամաց Գրիգորի ականջին:

— Անդրադետ ե,—պատասխանեց նա:

— Վոչինչ, պետք ե ընդունել նրան և դրագիտություն սովորեցնել:

Արդեն հաճախում ե լիկկայան:

Իմ ձայնը վերջնականապես սպառված եր: Ուստի Բենիկն եր պատասխանում հարցերին: Յես սպասում եյի, վոր ձայնս հանգստանա ու յես կրկին բացատրեմ կոլխոզնիկներին կոլխոզշարժման կամավորությունը: Յես առիթ եյի վորոնում չտկելու իմ քիչ առաջ կատարած սխալը, վորն այնքան ծայրահեղորեն շարունակեց ու խորացրեց Բենիկը:

Բայց ուրբաթն ավելի շուտ յեկավ, քան շաբաթը: Յետևի շարքերում կրկին աղմուկ բարձրացավ և մի խումբ կանայք «յոթ ծովի մերան»-ի գլխավորությամբ այնպես լցվեցին դահլիճն, ինչպես սելավից վարարած գետն ե խուժում ծովը՝ առաջացնելով կատաղի հոսանք: Յեթե տղամարդկանց վրա կարելի յեր ազդել խոսքով, խնդիրքով, աղաղակով, սպառնալիքով, ապա կանանց վոչինչ չեր ազդում: Մնում եր թողնել, վոր առաջին պահ մի կուշտ գոռգոռան, ծկլթան, բըղավեն, ճղավեն ու հանգստանան կամ հոգնեն:

Յեվ կանայք սկսեցին հետզհետե առաջանալով ու ձայները բարձրացնելով.

—Մեր կթանի մասուլը մեզ փողով եք ծախում, հա՞...

— Մենք մեր յերեխաներին չենք տա, վոր տանեք քաղաք ու ծախեք ամերիկացիներին...

— Հարյուր մետրանոց յորղանի տակին չենք ուզում քնել:



—Մենք կոլեկտիր չենք ուզում...

—Չենք ուզում, չենք ուզում...

Ամենից բարձր ծկլթում եր «յոթ ծովի մերանի» ձայնը.

—Ձեններդ միք կտրի, կնանիք, գոռացեք...մահ կամ աղատություն:

— Դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն, դինդոն... չարունակում եր ժամի զանգն իր մոլեգին կանոնաղան:

Վողբալի յեր Բեռի Պողոսի վիճակը: Տեսնելով իր կնոջը ցուցարար կանանց խմբի մեջ՝ նա ոձից խայթվածի պես վեր կացավ և ձեռքով, վոտքով, աչքերով, ունքերով, ձայնով սատում եր նրան, վոր լռի, կամ դուրս գա ժողովից:

—Այ կնիկ, այ սարսաղ, մի խայտառակի...

Բայց Անթառամ քիքիրը չեր լսում: Նրա ձայնը կորչում եր մյուս կանանց բազմաբդեշ ճղավոցների մեջ: Միայն յետ-յետ գնացող շրթունքներն ու մերկացող ընդերն եյին յենթադրել տալիս, վոր Անթառամ քիքիրը նույնպես բղավում ե:

Բեռի Պողոսը տեսնելով, վոր կինը վոչ մի նշան ցույց չի տալիս յենթարկվելու իր հրամաններին, ձեռքը հուսահատորեն թափ թվեց ու նստեց: Նա վորոշեց կնոջից վրեժը լուծել 3, 4, 5, 6 որ «բերանը դահրուամար չդնելով»: Յեվ իրոք այդ միակ միջոցն եր, վորից ազդվում եր Անթառամ քիքիրը:

Ցուցարար կանայք հազիվ 15 հոգի լինելին, բայց այնպիսի մի աղմուկ եյին բարձրացրել, վոր կարծես հազարավոր կանայք եյին բղավում: Տղամարդկանց համար անհարմար եր, ավելի ճիշտ, անհնար եր դիմադրել կանանց այդ զազազած գրոհին: Կանայք չատ

լով դիտեցին, վոր խորհրդային իշխանության մեջ իրենք ոգտվում են բացառիկ ուշադրությամբ ու հոգատարությամբ և իրենց այդ նվաճումն այժմ ոգտագործում էին այդ մի խումբ կուլակ ու յենթակուլակ պառավները: Նրանց մեջ կար միայն մի յերիտասարդ կին, վոր անասելի ուժով անընդհատ ճչում էր: Դա Գեղամ Զիլիֆյանի կինն էր:

—Դու ինչո՞ւ յես ճչում, Զիլիֆի հարս,—իր ամբողջ կոկորդով ճչաց Սրաքսը,— դու էլ հո կոլխոզի անդամ չե՞ս:

Զիլիֆի հարսն ուզեց հարձակվի Սրաքսի վրա, բայց դեմը կարեց ուսուցչուհին: Դահլիճում նախապես հավաքված էին յոթից-տասն ակտիվ կանայք, վորոնք կոլխոզի դիտակից կողմնակիցներ էին: Դրանց թվումն էին նաև Սոնա քեքերն ու Տիգրանի կին Սիրուշը: Մեր բանակի կանայք փորձեցին դիմադրել կուլակուհիների այդ ծկլթան դրոհին, բայց շուտով յես հասկացա, վոր դրանից կարող է միայն տուր ու դմփոց առաջանալ և ժողովը վերջնականապես պայթել: Զիլիֆի հարսը և «յոթ ծովի մերանը» ձգտում էին դեպի կոլխոզական կանանց խումբը հենց մաղ փետելու նպատակով:

Ցես ձեռքի նշանով ինձ մոտ կանչեցի Գեղամ Զիլիֆյանին:

— Եթե հենց այս րոպեյիս դուրս չտանես քո կնոջը, քսանչորս ժամվա ընթացքում կթռչես գյուղից:

— Ընկեր Վահան, յես կրնա՞մ կնկան դռի, դուք կըսեք կնկա ազատություն ա, ենիկ լե ժողով ի եկե:

— Քո կնկա ազատության մասին չի խոսքը:



— Այլանց այլանվայլության կնոջդ հեռացրու դահլիճից: Հանգիստ ժամանակ չի:

— Իրավունք կիտա՞ք տվեմ: Հարի չտվեմ, դուրս ելնում դա:

— Մի յերկարացնի:

Գեղամ Զիլիֆյանը դարձավ դեպի իր կինը:

—Սրգեյի աղջիկ, ճենդ կարի յե, յա՛...տուն գնա:

—Դուք իրավունք ունե՞ք ընձի տուն խրկեք...

Դուք իրավունք ունե՞ք ընձի ճնշեք,— բղավում էր Սրբուհի աղջիկը, այլանդակելով իր բնականից օիրուն ու փոքրիկ բերանը:

Բայց Գեղամ Զիլիֆյանը սովոր չէր, վոր իր հրամանը մնար անկատար, են էլ իր սեփական կնոջ կողմից: Ուստի վճռական մի շարժումով բռնեց կարճլիկ կնոջ թեվը և յերեխայի պես քաշ տվեց դեպի դուրս: Նրա որինակին հետևվեց Նայեվ քեռի Պողոսը՝ հարձակվելով իր պառավի վրա: Բայց մենք նրան թույլ չտվինք: Արդեն կարիք էլ չկար քեռի Պողոսի միջամտությանը, քանի վոր ցուցարար պառավները Զիլիֆյանի կնոջ յետևից դուրս դնացին: Ըստ յերևույթին նրանց զորավարը Զիլիֆի հարսն էր: «Յոթ ծովի մերանը» դռների մոտ մի անգամ էլ յետ դարձավ ու գոռաց.

— Մահ կամ ազատություն:

—Դե կորիր քո «մահի» ու քո «ազատության» հետ,—գոռացին դահլիճից, ու «յոթ ծովի մերանը» կչկչալով հեռացավ:

Տերտերը շարունակում էր մոլեգին զանդահարել: Գեղանանց յետևվից դուրս դնացին նաև Ցեղանակը, Ցերամը, Սերոբը, Գալուստը՝ կոչ անելով մասսային:

Բայց այս անգամ քչերը հետևեցին նրանց։ Արշակ Սահակյանն առաջարկեց դռները փակել և այլևս վոչ վոքի ներս չընդունել։ Առաջարկն անցավ ծափահարությամբ։ Կոմյերիտականներ Անուշավանն ու Գերասիմն խսկույն կանգնեցին դռների մոտ։

Նոր հարցեր այլևս չտրվեցին։ Մենք անցանք քվեարկության։

—Ընկերներ,— հայտարարեց Գրիգորը—բջիջի և չքավորական խմբակի առաջարկն է կթանները միացնել հարյուր տոկոսով։ Ուրիշ առաջարկ չկա՞։

—Ընկերներ,— ձայն ստանալով հայտարարեց Գեվոն,— յես ասում եմ ես տարի կթանները չմիացնենք։ Տեսնում ե՞ք, կնանիք խեղդում են մեզ։ Յես ասում եմ, ընկերներ, ես տարի հլամ մի քիչ ամրանանք, նոր դալ տարի, կամ աշնան կթանները միացնենք։

—Ուրեմն յերկու առաջարկ կա, ընկերներ, քվեարկում եմ։

— Ինձ ձայն տաս,— ժպտաց Սամսոնն առաջին նստարանից,— ընկերներ, յես ենպիսի մի առաջարկ անեմ, վոր կնանոց սիրուն ել չմնա, բջիջինն ել։Վոնց վոր մեր կուսակցությունն ա ասում՝ վոչ աջ ըլի, վոչ ձախ։ Յես առաջարկում եմ մեկական կով, կամ 5-ական վոչխար թողնել ամեն մի տնտեսության, իսկ մնացածը դիպ միացնել։

—Այ, լավ ասաց,—ձայն տվին մի քանի կողմից։

— Յես իմ առաջարկը միացնում եմ ընկեր Սամսոնին,— հայտարարեց Գեվոն, այսինքն յես ել եմ ասում մեկական կով կամ 5-ական վոչխար թողնենք, մնացածը միացնենք։



Սամսոնի առաջարկն ստացավ ձայների բացարձակ մեծամասնություն։ Ուստի կարիք չզգացվեց մնացած առաջարկները քվեարկել։

Բուռն ծափահարությամբ հաստատվեց չքավորական խմբակի վորոշումը՝ կոլխոզի դեմ պայքարող կուլակներին սեփականազրկելու և գյուղից աքսորելու մասին։

—Ընկերներ,— ձայն առավ Թևոսը,—յես առաջարկում եմ աքսորել նմանապես նաև այն միջակներին ու չքավորներին, վորոնք կուլակի տան մածուն են ուտում և կոլեկտիվը քայքայում։

— Ձիչտ ա՛,— բացականչեցին մի քանի յերիտասարդ։

Յես ձայն խնդրեցի։ Լավագույն առիթն եր չտկելու իմ կատարած սխալը։

— Ընկերներ, Թևոսը սխալվում է։ Մենք կուլակներին և չքավորներին ու միջակներին միևնույն աչքով չենք նայի։ Կուլակը մեր դասակարգային թշնամին է, չքավորն ու միջակը մեր դասակարգային յեղբայրներն են։ Կուլակի շահն է դրդում նրան կռվել կոլեկտիվի դեմ, իսկ միջակն ու չքավորը կռվում են հաճախ անգիտակցաբար, կուլակի պրովոկացիային զոհ գնալով։ Այդպիսի մոլորվածներին մենք նախ և առաջ աշխատում ենք համոզել, դասակարգային գիտակցության բերել։ Իսկ յեթե հակառակ մեր ընկերական ոգնության՝ այդպիսիները շարունակեցին իրենց դավաճանական գործը, մենք նրանց պատժելու ձևեր կգտնենք։ Բայց նախ քան պատժելը, մեր պարտականությունն է նրանց համոզել։ Կուլակին առանց խնայելու, խղճալու, անմիջապես խփում ենք, իսկ մոլորված միջակին ու չքավորին նախ և առաջ համոզում ենք։ Վորովհետև կու-

լակի շահը թույլ չի տալիս, վոր նա համոզվի, իսկ չքավորի ու միջակի շահերը նպաստում են, վոր նրանք համոզվեն։

Մենք աշխատում ենք և պետք է աշխատենք միայն ու միայն համոզելով կամավոր կերպով գրավել կոլեկտիվ չքավորին ու միջակին։ Ուրիշ կերպ սխալ կըլինի։ Ով վոր զոռ է բանացնում, վախեցնում է, նա մեր կուսակցության և խորհրդային իշխանության գծին հակառակ է գնում։ Կոլեկտիվից դուրս մնացած կամ դուրս յեկող աշխատավոր գյուղացիներին նույնպես մենք չենք համարում մեր թշնամիները, նրանց վրա խորթ աչքով չենք նայի։ Մենք անկեղծորեն նրանց համարում ենք մեր դասակարգային յեղբայրները, վորոնք դեռ չեն հասկացել կոլեկտիվ տնտեսության բարձրը նշանակությունը։ Մենք ամեն աշխատանք կթափենք, վոր նրանք շուտ հասկանան։ Հենց վոր նրանք հասկացան, իսկույն կդան կոլեկտիվ։

Նույնը յես պետք է ասեմ, ընկերներ, կրոնի և ժամի մասին։ Մեր իրավունքն է ու մեր պարտականությունը գյուղական մասսային համբերությամբ ասել, բացատրել, թե կրոնը սուտ է և վնասակար նախապաշարմունք, թե յեկեղեցին միայն մթագնում է մարդու գիտակցությունը, վորպեսզի նրան ավելի հեշտությամբ շահագործեն տերտերները ու կուլակները, կապիտալիստները ու կալվածատերերը։ Մենք մեր հակակրոնական ագիտացիան տանում ենք, առանց կոպիտ կերպով հայհոյելու, առանց վիրավորելու հավատացյալ մարդկանց զգացմունքները։ Մենք աշխատում ենք, վոր մանավանդ կոլխոզնիկ մասսան շուտ կտրվի կրոնից ու ժամից։ Իսկ յեթե մի կոլխոզնիկ դեռ նաև խանգարված է ու շարունակում է գեռի յեկեղեցի գնալ ու աղոթել, ապա մենք դրա համար նրան չենք հեռացնի կոլխոզից ու չենք պատժի, այլ կհամոզենք, կսովորեցնենք։ Մենք գիտենք, վոր վաղ թե ուշ նա կհամոզվի, գիտակցության կգա ու կդադարի դատարկ բաներին հավատալուց։

Ի վերջո՝ յեթե դու կամենում ես մեկին լավություն արած ըլնել, պիտի նա համոզվի նախ և առաջ, վոր քո անելիքը լավություն է և վոչ թե վատություն։ Յեթե նա այդ բանում չհամոզվի, դու ինչպիսի լավությունել ուզում ես արա, նա դեն կշպրտի։

—Շատ շնորհակալ եմ, ընկեր Ջան,—բացականչեց մի ալեխառն գյուղացի,— ուզում եյի դուրս գալ կոլեկտիվից, վախում եյի։ Վոր եղպես ասիր, սիրտս հանգըստացավ։ Հիմի խնդրում եմ ինձ դուրս գրեք։

—Յես շնորհակալ եմ, —ասաց մի ուրիշը։ Իսկ յես կարծում եյի, թե զոռով են կոլեկտիր գրում, դրա համար ել ուզում եյի դուրս գալ կոլեկտիրից։ Բայց հմի վոր զոռով չի, այլ ազատ կամքով ա, ախպեր, դուրս չեմ գա ու հարեվանից չեմ բաժանվի։

—Կանաչի դքու մոր մեջքը, հընկեր Վահան իմալ բերեց ու կապեց, վոր դուրս յեկողը հանգիստ սրտով դուրս կիգա, մնացողը ել հանգիստ սրտով կմնա։

— Հը, հը, հը... Աղախան բիձան չորերը հանեց,— ձեն տվավ դահլիճը։

—Զե, ախպեր,—պատասխանեց Աղախան բիձան։— Յես հալա աչք կիտամ։

Ժողովը վերջացավ։

ՀԱՅԿՈՍ — СССР
им. А. Мясникяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՑԱՆԿ


Կածանը.—ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԱՆ . . . . . 3
Աղջի ջան.—ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ . . . . . 35
Մարոն ու Սարոն.—ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ . . . 36
Քառյակներ.—Ն. ԶԱՐՅԱՆ . . . . . 38
Քառյակներ բամբակացաքին.—ԱԼԱԶԱՆ, Վ. ՆՈ-
ՐԵՆՑ, Ս. ՏԱՐՈՆՑԻ . . . . . 43
Սերոբի արտը.—Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ . . . . 50
Զրույց Ոհան ամու ...մասին.—Գ. *ՄԱՀԱՐԻ* .56
Բերբի տոնին-իմ Անտոնին.—ԽՆԿՈ ԱՊԵՐ . . 63
Ցես նուռ եմ.—Ս. ՏԱՐՈՆՑԻ . . . . . 66
Հունձը.—Ն. ԶԱՐՅԱՆ . . . . . 67
Հնձվորը.—Ն. ԶԱՐՅԱՆ . . . . . 68
Արեվն յելավ.—ԱՂԱՎՆԻ . . . . . 69
Ես բերբը բարինա.—Վ. ՏԱԼՅԱՆ . . . . . 70
Պատմում է 25 հազարականը.—Ն. ԶԱՐՅԱՆ . 71

ԳԻՆԸ 20 ԿՊ

154

БОЛЬШЕВИСТСКИЙ
ВЕСЕННИЙ СЕВ

ГИЗ СССР 1931 ЭРИВАНЬ

ՀՀ Ազգային գրադարան
NL0389326

71.655